

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ 3ԱՏՈՒԿ ՆԻՍՏ



Նախարարաց խորհուրդը երէկ առաւօտեան ժամը 10:00ին գումարեց յատուկ նիստ մը, նուիրուած՝ 2004ի պետական պիտուէի նախագիծի քննարկման: Նիստին նախագահեց նախագահ ԿՕՐ. Էմիլ Լախուտ, ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրի: Նիստին բացակայեցան փոխ վարչապետ Իսմայիլ Ֆարէս եւ նախարարներ Ֆարէս Պուէյզ, Նեժիպ Միքայիլ եւ Էլիսա Սըր:

Ժողովին ետք տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահա իր կատարած յայտարարութիւններուն մէջ նշեց, որ նիստին կատարուած քննարկումներուն ընթացքին պահանջուած է յաւելել մանրամասնութիւններ՝ վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդէն, տեղեկանալու համար անոր յատկացուած գումարները գործադրուելիք կարգ մը ծրագիրներուն համար, որոնք ներառուած են 2004ի պետական պիտուէի նախագիծին մէջ:

«Հետեւաբար պահանջուեցաւ նշել խորհուրդէն, որ կառավարութեան ներկայացնէ մանրամասն տեղեկագիր մը՝ նախագիծին մէջ ներառուած ծրագիրներու գործադրութեան մասին», ըսաւ Սըմահա: Ան աւելցուց նաեւ, որ ելեւմուտքի նախարար Ֆուատ Մինիորայէն պահանջուած է նախարարներուն յատկացնել մանրամասնութիւններ՝ նախորդ տարիներէն 2004ի նախագիծին վրայ յաւելուած գումարներուն մասին:

Սըմահա նշեց, որ վերոնշեալ պահանջներուն համաձայն, յառաջիկայ երկու օրերուն պիտի պատրաստուին հարկ եղած տեղեկութիւնները, որպէսզի կարելի ըլլայ շաբաթակից ճշդել կառավարութեան յաշորդ նիստին օրը:

Սըմահա շեշտեց, որ նիստին ընթացքին տիրած է դրական մթնոլորտ, անկեղծութիւն եւ լայնախոհութիւն: Իր կարգին, վարչապետ Ռաֆիք Հարիրի վստահեցուց, որ պիտուէի նախագիծի քննարկման նիստը լաւ կ'ընթանայ եւ աւելցուց, որ նախագիծը, որ 42 կէտերէ կը բաղկանայ, գրեթէ ամբողջութեամբ քննարկուած է, դիտել տալով, որ նախարար Մինիորայէն եւ վերաշինութեան ու բարգաւաճման խորհուրդէն պահանջուած տեղեկութիւններէն ետք պիտի յատկանայ կառավարութեան յաշորդ նիստին թուականը:

Ըստ կարգ մը աղբիւրներու, սակայն, նիստը տեղի պիտի ունենայ այսօր երեկոյեան ժամը 7:00ին:

ԸՍՏ ՆԱԳԻԼ ՇԱԱԹԻ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՔՈՐԷՅ ՊԻՏԻ ՄՆԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քորէյ, որ յայտարարած էր, թէ մինչեւ Հոկտեմբերի արտաքին պիտի առաջնորդէ արտակարգ կառավարութիւնը, երէկ հաւանութիւն տուաւ մնալու իշխանութեան վրայ եւ ընդարձակ դաշինք մը կազմելու, յայտնեց արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթ:

Քորէյ թեւ չհաստատեց լուրը, սակայն ըսաւ, որ եթէ կայութիւնը մնայ ինչպէս որ է հիմա, հարց պիտի չունենայ եւ հաւանաբար կազմէ ընդարձակ կառավարութիւն մը:

Շաաթ, որ կը խօսէր Ֆաթիհ կեդրոնական խորհուրդի մէկ նիստին արտաքին, ըսաւ որ Քորէյ շուտով խորհրդարանին պիտի ներկայացնէ ընդարձակ կառավարութիւնը: Ըստ Շաաթի, նոր կառավարութիւնը պիտի կազմուի անմիջապէս երբ արտաքին ստիպողական վիճակի դաշինքին մատչւածը, որ մէկ ամիս էր: Շաաթ աւելցուց, որ ընթացիկ դաշինքը, որ ոչ միայն արտաքին կազմուած է, պիտի դառնայ կո-



Քորէյ

յանցանքով: Գործողութիւնը տեղի ունեցած էր անցեալ տարի ու պատճառաւ ինք գոհեց:

● ԱՐԱՅԱԹԻ հետ համադրուած մը արտաքին, չիմ պատուիրակ Ուանկ Շիճի կոչ ուղղեց Իսրայէլի զինուորի պատրաստակամութիւնը ցոյց տալու՝ պաղեստինցիներուն հետ խաղաղութիւն մտածելու համար: Ուանկ ըսաւ, որ Արաֆատ եւ Քորէյ պատրաստ են քաղաքական լուծումի մը յանգելու Իսրայէլի հետ:

Շառ.՝ Էջ 2

ԻՐԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՍՈՒՐԻՈՅ

Իրան պատրաստ է Սուրիոյ օժանդակելու, եթէ քարիդի աներկեան ընկերութիւններ ստեղծեն իրենց գործունէութիւնը, յայտնեց իրանցի բարձրաստիճան պաշտօնատար մը:

Իրանի խորհրդարանին ազգային անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան յանձնաժողովի նախագահ Մոհսէն Միրտամաշի ըսաւ, որ եթէ Սուրիոյ հաշուետուութեան օրէնքը գործադրութեան դրուի, իրան պատրաստ է օժանդակելու բոլոր մարզերուն եւ յատկապէս՝ քարիդի մարզին մէջ:

Իրան իր կարգին ենթակայ է աներկեան խիստ պատժամիջոցներու եւ քարիդի նոր ծրագիրներու համար կ'ապահովի եւրոպական եւ ասիական ընկերութիւններու վրայ:

(ԱՅՓ)

ԻՐԱՔ ԱՐԻԻՆԱԼԻ ՊԱՅԹՈՒՄՆԵՐԸ ԸՍՍԱՆ ՖԱԼՈՒԺԱ

Պաղտատի արիւնալի յարձակումներէն մէկ օր ետք, երէկ Ֆալուճայի մէջ ինկան վեց գոհեր եւ տասնեակ մը վիրաւորներ, երբ ականուած ինքնաշարժ մը պայթեցաւ ոստիկանատան մը մօտ: Ականատեսներ յայտնեցին, որ գոհերուն կարգին են մանուկներ, որովհետեւ ոստիկանատան կից կայ դպրոց մը: Ականատեսները աւելցուցին, որ պայթեած ինքնաշարժը փոքր վաճ մըն էր, որ կանգ առած էր ոստիկանատան մօտ, ելեկտրական ընկերութեան դիմաց: Անոնք ըսին նաեւ, որ ինքնաշարժին մէջ մարդ չկար: Ականուած ինքնաշարժին կողքին, վնասուած են քանի մը այլ ինքնաշարժներ:

Ֆալուճայի յարձակումը տեղի կ'ունենար այն պահուէն, երբ Պաղտատի մէջ մէկ օր առաջ տեղի ունեցած Հինգ անձնասպանական գործողութեանց գործած աւերները կը մաքրուէին: Պաղտատի ընկալիչները տակաւին չեն սթափած ցնցումէն: Ֆալուճայի ընկալիչներ իրենց կարգին, դատապարտեցին յարձակումները, դիտել տալով որ անոնք ամերիկացիներուն դէմ չեն, այլ՝ անմեղ քաղաքայիններուն, որոնք կու տան մեծ թիւով գոհեր:

Պատրաստի մէջ երէք հոգի վիրաւորուեցաւ, երբ գանոնք փոխադրող ինքնաշարժը յարձակումի ենթարկուեցաւ: Բրիտանացի զինուորական բանրբեր մը ըսաւ, որ վիրաւորներէն մէկը նոր գելանտացի զինուոր մըն է: Ականատեսներ յայտնեցին, որ երկու զինուորներ կրակ բացին բրիտանական ուժերուն պատկանող ինքնաշարժին վրայ: Զինեալները հաւանաբար ենթարկուած էին, որ գոհերը բրիտանացի զինուորներ պիտի ըլլան:

Իրաքի մէջ բրիտանացի մասնաւոր պատուիրակ ձեռնարկ կ'ընեն ըսաւ, որ Պաղտատի եւ այլ քաղաքներու մէջ տեղի ունեցող յարձակումներուն ետին կը կանգնին օտարները: Կրիսթոֆեր Նախատեսեց, որ յարձակումները շարունակուին ամբողջ ձմեռան ընթացքին: Կրիսթոֆեր դիտել տուաւ, որ կարգ մը յարձակումներուն անձնասպանական բնույթը կ'առաջարկէ, որ անհրաժեշտ օտար շարժումներ կը գործեն Իրաքի մէջ եւ ոչ անպայման Մատամի հաւանաբար ուժերը:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը կոչ ուղղեց կարմիր խաչի Միջազգային կազմակերպութեան, որուն կեդրոնատեղին թիրախ դարձած էր յարձակումի, որ չհետանայ Իրաքէն, ուր կենսական կը նկատուի մարդասիրական կազմակերպութիւններու ներկայութիւնն ու գործունէութիւնը: Փաուլը ըսաւ, որ միջազգային կազմակերպութիւններու հետեւումը յաղթանակ պիտի նկատուի անհրաժեշտներուն համար:

● ԹՈՒՐԿԻՅԱՆ Կարմիր Մահիկ կազմակերպութիւնը քանի մը թոն մարդասիրական օժանդակութիւն ուղարկեց Իրաք: Մէկ ամսուան մէջ երկրորդ անգամ ըլլալով՝ Թուրքիա օժանդակութիւն կ'ուղարկէ Իրաք:

● ԵՒՐՈՊԱԿԱՆ Ցանձնաժողովը կոչ ուղղեց միջազգային կազմակերպութիւններու Իրաք մտնելու, որովհետեւ անոնց ներկայութիւնը անհրաժեշտ է:

● ՉԻՆԱՍԱՆ վերահաստատեց, որ հաւանականութիւն չկայ չինական ուժեր ուղարկելու Իրաք:

● ԵԳԻՊՏԱԿԱՆ «Ախպար» օրաթերթը կը գրէր, որ «Իրաքեան ճահիճին» մէջ չիտեղադրուելու համար՝ Միացեալ Նահանգներ պէտք է շուտով իշխանութիւնը իրաքցիներուն յանձնեն ու հետանան:

(ԱՅՓ)

ԻՐԱՔ ԹՐԲԱԿԱՆ ՈՒԹԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՀԱՐՅՈՎ

ԿԻԼ ԿԸ ՔՆԱԴՄՏԷ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՏԴԱՐՉԸ

ԱՆԳԱՐԱ, 28 (ԱՅՓ).- Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ Երեւանի մէջ յայտնած է, թէ Մ. Նահանգներ անտակ են իրաք թրջական ուժեր ղրկելու առաջարկին գծով քայլերու դիմելու, հաղորդած է «Անտոլու» լրատու գործակալութիւնը:

«Նախ անոնք եկան շատ խանդավառ կերպով եւ մեզ մէջ խնդրեցին, որ չուշանանք, ապա անոնք տեսան, որ բազմաթիւ տարբեր հարցեր կան: Իրենք բազմաթիւ հարցերու գծով կը տատամսին», ըսած է Կիլ՝ ամերիկացիներուն մասին:

Յետպատերազմեան իրաքի մէջ գոհերու հետգհետէ բարձրացող թիւերով, Ուաշինկթըն Անգարայէն զինուորական օժանդակութիւն խնդրած է, ապա ետդարձ կատարած է՝ Իրաքի փոխանցման ղեկավարութեան ընդդիմութեան պատճառով:

Մինչ այդ, Անգարայի կառավարութիւնը խորհրդարանին համամտութիւնը ձեռք ձգած էր՝ Իրաք ուժեր ղրկելու հարցին գծով, հակառակ հանրային կարծիքին ընդդիմութեան:

Անգեալ շարժ վարչապետ Ռեճեփ Թայյիպ էրտողան յայտնած է, թէ Ուաշինկթըն Անգարայի հետ բանակցութիւնները դադարեցուցած է, սակայն ծրագրէն չէ հրաժարուած:

Կիլ դիտել տուած է, որ ամերիկացիք շրջանը շատ լաւ չեն գիտեր: Անոնք ուշադրութիւն չեն դարձուցած իրենց տրուած թիւերուն: Եթէ ներկայիս Իրաքը կառավարող պաշտօնատարները շրջանը աւելի լաւ ճանչնային, վիճակը այսօր աւելի լաւ պիտի ըլլար, յայտնած է ան:

ԶԱԽԱԽՔԱՀ ԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԵՄԻՆ

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէ խորհրդարանին ընտրութիւններու քարոզարշաւի ծիրէն ներս այցելեց Չաւախք: Ախալքալաքի մէջ ան այցելեց Թիֆլիսի պետական համալսարանի Ախալքալաքի մասնաճիւղ, ուր հանդիպում ունեցաւ դասախօսներու եւ ուսանողներու հետ: Ապա ան այցելեց Ախալքալաքի շրջանային հիւանդանոց, որմէ ետք քաղաքի մշակութային տան մէջ տեսակցութիւն ունեցաւ Չաւախքի բոլոր շրջաններու ներկայացուցիչներուն հետ: Ան դիտել տուաւ, որ իր այցելութիւնը աշխատանքային է եւ միայն խորհրդարանական ընտրութիւններով չէ պայմանաւորուած: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց շրջանի հայ բնակչութեան, որ երկրին ծանր տարիներուն՝ քաղաքացիական պատերազմի օրերուն սաղաքաններու մասնակից չէղաւ: Ան կարեւորեց շրջանի հայութեան դերն ու կշիռը:

Նշուելով Նոյեմբեր 2ի խորհրդարանական ընտրութիւններու մասին, Շեւարտնաձէ կոչ ուղղեց «քուէարկել այնպիսի ձեռքով, որ խորհրդարանը կազմուած ըլլայ արհեստավարժներէ»:

Միւս կողմէ, Չաւախքի հայկական կազմակերպութիւններու խորհուրդը կոչ ուղղեց շրջանի հայութեան՝ Նոյեմբեր 2ին քուէարկել ի նպատակ «Չուսպար Պատիւովի Էրթոյա քաղաքական միաւորում» դաշինքին, որ ըստ խորհուրդին, միակն է, որ ընդունած է ընտրութիւններուն վերաբերեալ իր յայտարարագրին դրոյթները եւ խոստացած է յաւելել ուշադրութիւնը ցուցաբերել հայ բնակչութեան հարցերուն»:

Հայկական կազմակերպութիւնները վերջերս ներկայացուցած էին շրջանի քաղաքական, ընկերային-տնտեսական, կրթական հարցերուն վերաբերող ամբողջական փաստաթուղթ մը, եւ ընտրութիւններուն մասնակից ուժերուն առաջարկած էին դիրքորոշում որդեգրել փաստաթուղթի բովանդակութեան շուրջ:

Մեծամասնական ընտրակարգով առաջարկուած թեկնածուներէն ցարդ խորհուրդի յայտարարագիրը ընդունած է իր գործունէութեան ծրագրի հիմք նկատած է Ծալկայի շրջանէն թեկնածու Հայկ Մելտոնեան: Խորհուրդը իր կարգին Ծալկայի հայութեան կոչ ուղղած է քուէարկել ի նպատակ Մելտոնեանի: Անոր ընտրութեան համալսարանականութիւնը շեշտուեցաւ, երբ այլ հայ թեկնածու մը՝ Վան Բայրուրդեան քաջեց իր թեկնածութիւնը այն մտավախութեամբ, որ քանի մը հայ թեկնածուի պարագային մեծ մասամբ հայերով բնակեցուած շրջանին մէջ կրնայ ընտրուի ոչ հայ պատգամաւոր մը: Ան միաւորուելու կոչ ուղղեց հայ թեկնածուներուն:

ՓԱՌԸԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՇԱՐԷԸԸ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը դատապարտեց սուրիացի պաշտօնակից Ֆարուք Շարէհը, որ «հետադարձ լարուածութեան» թափ տուած էր՝ կողանի մէջ խորհրդանշանական ընկերութեան վարչերուն դէմ յարձակելու սպառնալիքով:

Փաուլը ըսաւ, որ Ուաշինկթըն կը քաջաբերէ երկու կողմերը՝ մեղմացնելու լարուածութիւնը, իսկ Շարէհի կատարած յայտարարութիւնը այդ նպատակին չի ծառայեր: Փաուլը շեշտեց, որ այս բնույթի յայտարարութիւններ չեն նպաստեր շրջանային խաղաղութեան եւ կայունութեան:

Շարէհ երկու օր առաջ ըսած էր, որ եթէ Իսրայէլ վերստին յարձակում գործէ սուրիական հողերու վրայ, Դամասկոս լուռ պիտի չմնայ եւ պիտի հակադարձէ: Շարէհ անուղղակի կերպով սպառնացած էր կողանի բնակեցման վարչերուն:

(ԱՅՓ)

ՏԱՆՁՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ՄԸ ՉՔՆԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՉԱԽԱԽՔ ԷՁ 4

ՊԵՐՐԻԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երեկ ընդունեց նախկին երեսփոխաններու լիկայի վարչական խորհուրդի մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Ծաֆիք Պատրի:

Հանդիպումէն ետք Պատր յայտնեց, որ ասիական առաջին այցելութիւնն է, որ կը կատարուի Պերրի լիկային կողմէ, եւ աւելցուց, որ պատուիրակութիւնը Պերրիի շնորհակալութիւն յայտնած է լիկային հանդէպ ցուցաբերած օժանդակութեան համար: Ան յայտնեց, որ լիկան դէմ է այն առաջարկին, թէ հանգստեան կոչուած պաշտօնեաները պետք է անձնական հաշիւներ բանան դրամատուներու մէջ, մոռնալով դրամատան գաղտնապահութեան պայմանը:

Պերրի ընդունեց նաեւ Լիբանանի մէջ ՄԱԿի գրասենեակներու նախագահներու մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Լիբանանի մէջ ՄԱԿի գործակալութեան գործավար Իվ Տոսանի:

Պերրիի այցելուներէն էր նաեւ արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍՈՒՍԱԲՈՒՄԻ ԺՈՂՈՎ

Լիբանանեան կուսակցութիւններու համախմբումը երեկ Ղովմի կուսակցութեան կեդրոնատեղիին մէջ գումարեց ժողով մը, որուն ընթացքին քննարկեց տեղական եւ շրջանային հարցեր եւ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, թէ որոշած է յետաձգել յառաջիկայ Ուրբաթ օրուան ցոյցին թուականը:

Նշեց, որ ցոյցին նպատակն էր զօրակցութիւն յայտնել ինքիֆատային եւ պաղեստինեան դիմադրութեան, ինչպէս նաեւ Սուրիոյ եւ անոր ամուր կեցուածքին:

Հաղորդագրութիւնը գտաւ պարտեց նաեւ իսրայէլեան ուժերուն կողմէ պաղեստինցի ժողովուրդին դէմ գործադրուող բռնարարները, ինչպէս նաեւ քանդուածի գործողութիւնները, որոնք կը շարունակուին իսրայէլեան բռնազրաւող ուժերուն կողմէ:

Հաղորդագրութիւնը յայտնեց իր հպարտութիւնը իրաքեան դիմադրութեան գործողութիւններուն ի տես:

Միւս կողմէ, հաղորդագրութիւնը շնորհաւորեց բոլոր լիբանանցիներն ու իսլամները՝ Ռամատանի առիթով եւ մաղթեց, որ տօնը ըլլայ առիթ մը՝ վերանորոգելու իրաքի եւ պաղեստինցի ժողովուրդներուն զօրակցութիւնը:

ՀԱՐԱԻՄՅԻՆ ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՄՆԱՅ ՊԱՅԹՈՒՑԻԿ ԿԻՃԱԿԻ ՄԷՋ

Հարաւային Լիբանանի մէջ իսրայէլեան ուժեր երեկ յետմիջօրէին սահմանային գիղերու կայունութիւնը խախտեցին՝ ուժակոծելով Քֆարշուպան, Պասթրան, ինչպէս նաեւ Մապարէի Շրպաայի շրջակայքը:

Միւս կողմէ, նախանցեալ օր Լիբանան - Իսրայէլ սահմանային բախումներուն յոյսին տակ, հարաւի մէջ Ֆինիլի միջազգային ուժերու հրամանատարութիւնը խստացուց հսկողութիւնը: Ֆինիլի ուժերը առաւելաբար խիստ հսկողութիւններ կատարեցին Սպապահէ - Ուապպանիի, Քֆարքիլայի, Հուլայի, Մէյս Ժապալի մէջ:

Իսրայէլեան օդուժը երեկ դարձեալ թռիչքներ կատարեց Խիամի, Ատիսի, Ուապանիի վերեւ եւ հասաւ մինչեւ բռնազրաւուած Մապարէի Շրպաա ու Հասպաիա:

Միւս կողմէ, նախանցեալ օրուան ուժակոծումը պատճառած է նիւթական մեծ վնասներ:

Իր կարգին, Իսրայէլի մէջ հիւսիսային շրջանի իսրայէլացի հրամանատարը երեկ Լիբանան - Իսրայէլ սահմանն ու «Կապոյտ Գիծ»ը նկատեց վտանգաւոր գօտի: Ան ըսաւ, որ սահմանային կայունութեան որեւէ խախտումի պարագային յանցաւորը Սուրիան, Լիբանանն ու Հրպայիլան են, որովհետեւ անոնք են նախալարձակները, իսկ Իսրայէլ միայն կը պաշտպանուի...

ՄԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ՝ ՄԱՄԼՈՅ ՄԵՆՏԻՔԱՅԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՒՆ ՄԷՋ

Ընկերային հարցերու պետական նախարար Ասատ Տիպա երեկ ՄԱԿի միջազգային օրուան առիթով մասնակցեցաւ կլոր սեղանի մը, որ տեղի ունեցաւ մամլոյ սենտիքայի կեդրոնատեղիին մէջ, ներկայութեամբ բարձրատիճան պաշտօնատարներու եւ մամլոյ սենտիքայի նախագահ Մոհամէտ Պալպէքի:

Հանդիպումին խօսք առաւ Տիպա, որ շեշտեց, թէ ՄԱԿ պետք է իր որոշումները խտրականութեամբ գործադրէ: Ան աւելցուց, որ ՄԱԿին ներկայիս կը պարտադրուի դիմադրութիւնը ահաբեկչութիւնը որակել, ինչ որ մեծ վտանգ է եւ կ'ապացուցէ, որ ան կ'ենթարկուի մեծ պետութիւններու որոշումներուն, ինչպէս նաեւ համարալ ժողովուրդներու: Պալպէքի իր խօսքին մէջ յայտնեց, որ ժողովուրդներ եւ պետութիւններ պետք է տնտեսական արտադրութիւնները եւ պետական ծախսերը կ'ապացուցէ, որ ան կ'ենթարկուի մեծ պետութիւններու որոշումներուն, ինչպէս նաեւ համարալ ժողովուրդներու: Պալպէքի իր խօսքին մէջ յայտնեց, որ ժողովուրդներ եւ պետութիւններ պետք է տնտեսական արտադրութիւնները եւ պետական ծախսերը կ'ապացուցէ, որ ան կ'ենթարկուի մեծ պետութիւններու որոշումներուն, ինչպէս նաեւ համարալ ժողովուրդներու:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԲԱՅՈՒՄ՝ ՄԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԻՆ

Երեկ խորհրդարանի մէջ, հովանաւորութեամբ խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրիի, բացումը կատարուեցաւ ՄԱԿի հրատարակութիւններուն եւ փաստաթուղթերուն կեդրոնին: Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Պերրիի ներկայացուցիչ՝ երեսփոխան Ալի Խալիլ, վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ՝ երեսփոխան Միշէլ Ֆարաճ, ինչպէս նաեւ մեծ թիւով երեսփոխաններ, Լիբանանի մէջ ՄԱԿի գործավար Իվ Տոսան եւ ՄԱԿի տարբեր կեդրոններու նախագահներ: Խալիլ, որ փոխանցեց Պերրիի խօսքը, նշեց կեդրոնին ստացած օժանդակութիւնը եւ զօրակցութիւնը խորհրդարանի նախագահին կողմէ եւ դրուատեց ի գործ դրուած բոլոր շահեկան արդիականացները արդիականացներու համար նշեալ կեդրոնը:

ԿՈՒՑՈՒԻ

● Ոսկերչատան մը համար՝ վարպետ ճիւղաճի եւ վարպետ սետեքը մը: Դիմել՝ հեռ. 01 - 242549:

ԿՈՒՑՈՒԻ

● Ոսկերչատան մը կարիք ունի կապոյտ մոնով աշխատող վարպետներու եւ ոսկերչներու (սետեքեր): Դիմել՝ հեռ. 01-268361:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՆԱԽԿԻՆ վարչապետ Սելիմ Հըս երեկ դատարանեց նախանցեալ օր Պաղատի մէջ կատարուած յարձակումները, որուն կոն գացին տասնեակներ: Ան դիտել տուաւ, որ նման արթեր դիմադրութիւն չեն, այլ՝ անհատներու կամ կազմակերպութիւններու գործն են, որոնք կ'ուզեն ձրի ծառայութիւններ մատուցել բռնատեղերուն:

● ԵՐԵՎՈՒՆ Ատոնան Արաքի երեկ յայտնեց, որ Լիբանանի քաղաքացիներուն արդար իրաւունքն է դիտել, թէ վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդի 2004ի պետական պիւտճէի նախագիծով յատկացուած 110 միլիարդ լիբանանեան ֆունտը ի՞նչու համար պէտք է չեղեալ նկատուի: Ան դիտել տուաւ, որ նշեալ խորհուրդը լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ գործադրելիք ծրագիրներ ունի ի նպաստ երկրին բարգաւաճման եւ ժողովուրդին ծառայութեան:

● ՊԵՐՐԻԻԹԻ առեւտրականներու միութեան նախագահ Նետիմ Ասի երեկ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկին կացութիւնը բաւական վտանգաւոր է՝ մսխումին եւ փտածութեան հետեւանքով:

Ասի դիտել տուաւ, որ առեւտրականներու պարտքերուն հիմնական լուծումը կը կայանայ դրամատուներու հետ համաձայնութեան մէջ, որպէսզի անոնց մուրհակները փակուին երկար ժամանակի վրայ, նուազած տոկոսներով:

Ասի պահանջեց, որ երկրին ընդհանուր պարտքը նուազեցուի, ինչպէս նաեւ մսխումն ու փտածութիւնը կասեցնել, շնչելով որոշ տուրքեր, որոնք ոչինչ կ'ապահովեն երկրին:

● ԵՐԵՎՈՒՆ Փիեռ Ժեմայէլ երեկ յայտնեց, որ Հարաւային Լիբանանի մէջ արձանագրուած զարգացումները մեծ վտանգ են, շրջանային ներկայ պայմանները նկատի առած: Ժեմայէլ ընդգծեց, որ Լիբանանի դէմ իսրայէլեան ոտնձգութիւնները կրնան իսրայէլի համար շնչառութեան պատուհան մը ըլլալ՝ ներքին իր տագնապները փարատելու միտումով:

● ԸՆԿԵՐՎԱՐ Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար երեսփոխան Ուալիտ Ժոմայլա Նախանցեալ օրուան յայտարարութիւններուն պօրակցեցան «Համադաշնակցութիւն» Կուսակցութիւնը, ինչպէս նաեւ ժողովրդային յանձնախումբերու եւ լիկաներու համախմբումը: Միւս կողմէ Լիբանանի ամերիկեան դեսպանատունը, որ նշեալ յայտարարութիւնները նկատած էր ահաբեկչութիւնը քաջալերող կոչելը, խստի դատապարտեց Ժոմայլաի ելույթը:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն
ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան ըսաւ, որ Իսրայէլ միջազգային օրէնքը խախտած է Կազայի մէջ պաղեստինեան երեք շէնքեր ուժեղացնելով ու քանդելով: Անան յիշեցուց, որ քանակարաններու քանդումը համազօր է հաւաքական պատիժի. որ կը մերժուի միջազգային օրէնքի կողմէ:

ST. MARC
MEDICAL & DIAGNOSTIC CENTER
ՈՉ ԳՈՑ «ԳԱԳԱՂ»Ի, ՈՉ ԱԼ ՆԵՂ «ՆՈՂՈՎԱԿ»Ի ՄԸ ՄԷՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԻՔԸ ՄՆԱՑ ԱՅԼԵՍԻՍ
ԱՐԳԻ ԹԵՔՆՈԼՈԳԻԱ
ԳՈՑ MRI ԲՈՒՄԱՐԻՆԵՑ ԲԱՑ MRI ԻՎ
ՎԱՆԵԱԼՈՒ ՊՏՏԱՌ ՉՄՆԱՑ
ԲՈԼՈՐ MRI ԵՎ ՄԱՐԱՑԱՆՄԱՆ
ԿԱՐԻՔԸ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՒՍԱԳՆԵՐՈՒՆ, ՇՆՈՐՀԻՒ
ՇՐՋԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄԻԱԿ
ԲԱՑ MRI ԻՆ
ՈՐ ՄԵՑ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՄԲ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԸ ԳՈՐԾԵԼ
ՍԵՆ ՄԱՐԲ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ
ԺԱՄԱԿՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝
01-58 66 33
01-57 65 65
01-58 26 58
03-23 88 87
GE SIGNA PROFILE ULTRA
OPEN MRI 15mT/s

ՆԱԻՍՍԱՐԳ
ԱԲԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵՅԷՔ
«ԱԶԴԱԿ»ԻՆ
Վճարելով «Ազգակ»ի փարեկան բաժանորդագիրը, մեր ընթերցողները օրաբերքին հետ կը ստանան նաեւ
ԱԶԴԱԿ
Հարաբերքը, ամսական յանդիմաններ
«Պարիկ-Սպարիկ»ը, «Անհիպ»ը,
«Նասասար»ն ու «Ազգակ-ամսաբեր»ը:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ ԿՐԱՐՔ ՎՃԱՐԵԼ
ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ
«ԱԶԴԱԿ» օրաբերք, Շաղոյեան կեդրոն
Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526
Fax : 01-258529
E-mail : aztag@inco.com.lb
website : www.aztagdaily.com
www.aztagdaily.com

«ԴԵՄ ԱՌ ԴԵՄ»
Հարցազրոյցներու շարք
«ԱԶԴԱԿ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՓԱՌԻԼՕ ՔՈԷԼՈՅԻ ՀԵՏ
«Ազգակ»ի Հինգշաբթի 30 Հոկտեմբերի թիւով կարդալ մեր շահեկան հարցազրոյցը աշխարհահռչակ գրող Փաւլո Քոէլոյի հետ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Մշակութային Ժամ
«ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԳՈՅԱՏԵՄԱՆ ՍԱՐՏԱՐԱԿԵՐՆԵՐԸ»
Կը դասախօսել՝
(Աճկերէն լեզուով)
ՓՐՈՑ. ԷՏՈՒԱՐՏ ԹԻՐԻԱՔԵԱՆ
(Տիւր Լամալարան - Միացեալ Նահանգներ)
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 30 Հոկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:00ին, Կայկազեան Լամալարանի հանդիսարանին մէջ:



Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՄԿԱՌԻՏՆԵՐԸ ԱՇԽԱՏԻՑՈՐԷՆ ՎԵՐՍԿՍԱՆ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Կիրակի, 26 Նոյեմբերի երեկոյան ժամը 5:00ին, Պուրճ Համուտի փողոցներուն մէջ հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի շէփոթախումբին նուագը եւ անոնք վերակենդանացան Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի մասնաճիւղի սկաւտներու տոնանգրով:



Մասնաճիւղի մոկկիներէն մինչեւ պարմանուհիներն ու երէցները իրենց այս տարեշրջանի աշխատանքները սկսան շուրջ մէկ ժամ տեւողութեամբ Պուրճ Համուտի մէջ տողանցելով, որմէ ետք ուղղուեցան Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Բոլէճի շրջափակ, ուր տեղի ունեցաւ սկաւտակաւ պաշտօնակալ վերամուտ:

Սորթափով եւ կորով սկսած վերամուտի հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութիւնէն եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային սկաւտակաւ խորհուրդն ու խմբապետութիւնը, մասնաճիւղի վարչութիւնն ու սկաւտակաւ խորհուրդը, ինչպէս նաեւ ծնողներ եւ բարեկամներ:

Հանդիսութեան բացման խօսքը կատարեց եւ ներկաներուն բարի գալուստ մաղթեց Ա. միառորի խմբապետ եղբ. Ներսէս Չիլինկիրեան, որ սկաւտակալ կենսաքին եւ

անոր գործունէութեան նեցուկ կանգնող եւ անսակարկ նուիրումով գործողներուն շնորհակալութիւն յայտնելէ ետք բարի վերամուտ եւ յաջողութեամբ լեցուն երթմաղթեց մասնաճիւղի սկաւտակաւ խումբերուն:

Ապա տեղի ունեցան աստիճաններու եւ պաշտօններու տուիչութիւն եւ երդման արարողութիւններ, որոնց ընթացքին սկաւտները անգամ մը եւս ամբարանդեցին հայրենիքին, ազգին եւ Հ.Մ.Ը.Մ.ին հաւատարմ մնալու եւ յօգուտ անոնց գործելու իրենց ուխտերը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային սկաւտակաւ խորհուրդի անունով խօսք արտաւեր. Սիմոն Թաշճեան, որ գնահատեց թէ՛ սկաւտութիւնը եւ թէ՛ վանոնք քաջայերող ու մնալուն կերպով անոնց օժանդակող անձերը եւ շէշտեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը այն կեդրոններէն է, որ հայեցի դաստիարակութիւն կը ջանքէնոր սերունդներուն:

Փակման խօսքը արտասանեց Պօղոս քինյ. Քէօզկերեան, որ քսու, թէ ինք եւս եղած է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ դպրոցի

աշակերտներէն եւ հաստատեց, որ անսկաւտակաւ կարգ ու կանոն, գիտելիքներ փոխանցելու կողքին կը պատրաստէ անհատներ, որոնք յաւաքէս կը գիտակցին իրենց լեզուին, հայրենիքին ու մշակոյթի արժէքին եւ առաւելագոյն չափով կը փորձեն պահպանել վանոնք:

«Պահպանիչ» էն առաջ ան գնահատեց այն բոլոր անձերը, որոնք կը գործեն այս ճամբուն վրայ եւ իրենց կարելիին կ'ընեն անոր յաջողութեան ի խնդիր:

Պաշտօնակալ արարողութեանէն ետք սահիկներու ցուցադրութեամբ ներկաները ծանօթացան մասնաճիւղի սկաւտակաւ աշխատանքներուն, յայտագիրներուն, ձեռնարկներուն եւ գործունէութեան:

Հանդիսութեան ատարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Նոյն օրը առաւօտուն, Հ.Մ.Ը.Մ. ասանդութեան համաձայն, իրենց տարաշրջանը սկսելէ առաջ խումբերը ներկայ եղան Ա. պատարագին եւ Ա. հաղորդութիւն ստացան:

Arabic header with logos for 'Al-Safir' and 'Al-Nasr' newspapers.

Պաղտատի մէջ պայթումներուն հետեւանքով արձանագրուած փոփոխութիւնները, ինչպէս նաեւ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի յայտարարութիւններն ու կեցուածքները կը հանդիսանան լիբանանեան օրաթերթերուն միջազգային եւ շրջանային գլխաւոր լրջները:

ՊԱՂՏԱՏԻ ՊԱՅՅՈՒՄՆԵՐԸ

«Սաֆիր» գրած է. «Բռնագրաւուած Պաղտատը կը խեղդուի իր իսկ պատկաններուն արեւան օդուն մէջ, իսկ Պուշ յառաջդիմութիւններ կը նկատէ: 42 փոփոխութիւններ կը նկատուին արձանագրուեցան պայթումներու ընթացքին, որոնք չխնայեցին նոյնիսկ Միջազգային Կարմիր խաչին:

«Մուսաքալա» դիտել տուած է, թէ յարձակումները մեծ թափով կը շարունակուին Պաղտատի մէջ, իսկ ամերիկացիները անկարող են քայլերու դիմելու:

«Լիուա»-ի համաձայն, պայթումներու շարք մը գործադրուեցան պաղտատի մէջ եւ Միջազգային Կարմիր խաչը շարունակեց իր առաքելութիւնը, հակառակ անոր որ իր կեդրոնաւոր է ինքնապաշտպանութեան:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ իրաքեան ընդդիմութիւնը 45 վայրկեանի մէջ կը տիրապետէ Պաղտատի. 5 անձնասպանական գործողութիւն կատարուեցին կը պատճառեն 43 փոփոխութիւն:

«Նահար»-ի համաձայն, իրաքեան ոստիկաններու երեք կեդրոններ եւ Միջազգային Կարմիր խաչի կեդրոն մը թիրախ դարձան անձնասպանական գործողութիւններու, որոնք ցնցեցին ամբողջ Պաղտատը:

«Տիար» օրաթերթը գրած է, թէ Իրաքի մէջ ամերիկեան ծրագիր ձախողութեան կը մատնուի, իսկ Պաղտատի ամբողջովին կը կորսուի:

«Անուար» դիտել տուած է, թէ իրաքցիներուն օգնութեան համար Պաղտատ գտնուող Միջազգային Կարմիր խաչի անդամները սկանաւտեղան ու ապրեցան հաւաքով ղեկավարուող ղեկավարներու ղեկավարութեան տակ:

ՊԱՂՏԱՏԻՆԵԱՆ ՏԱԳԱՊ. ՇԱՐՈՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Մուսաքալա» գրած է, թէ Արաքի հաւանաբար սենեակ մը կառուցէ իր կեդրոնին մէջ բնակարանի համար:

Ըստ «Սաֆիր»-ի, Իսրայէլ կ'օրինականացընէ բնակավայրերը, իսկ Շարոն կը յայտարարէ, թէ ապահովութեան պարիսպը «ծողովրդական» պէնք մըն է:

«Լիուա» գրած է, թէ նահատակ մը եւ վիրաւորներ արձանագրուեցան իսրայէլեան յարձակումի մը ընթացքին, իսկ Քոնի կը փորձէ երկկողմանի համաձայնութիւն մը գոյացնել:

Ըստ «Տիար»-ի, իրանական սուրիական զինուորական հանդիպում մը տեղի ունեցաւ, որպէսզի ապահովական եւ պաշտպանութեան մարզերուն մէջ համադրումներ կատարուին:

«Սաֆիր» դիտել տուած է, թէ Փաուրլ Սուրիան եւ Իսրայէլը իրաւիքած է լարուածութիւնը մեղմացնելու:

Թերթին համաձայն, Իրան պատրաստ է Սուրիոյ նեցուկ կանգնելու, եթէ ան պատճառի Միացեալ Նահանգներու կողմէ կամ յարձակումի ենթարկուի Իսրայէլի կողմէ:

«Մուսաքալա»-ի համաձայն, Մահաթիր հարց տուած է, թէ արդեօք անէն մարդ իրաւունք չունի իր բարութեան եւ ընդվզումին մասին խօսելու:

«Մուսաքալա»-ի համաձայն, Մահաթիր հարց տուած է, թէ արդեօք անէն մարդ իրաւունք չունի իր բարութեան եւ ընդվզումին մասին խօսելու:

«Մուսաքալա» գրած է, թէ Քալիֆորնիոյ մէջ հրդեհներ ծայր կ'անեն եւ պատասխանատուները արտակարգ դրութիւն կը յայտարարեն:

ՋԱԿԱՆՔԻ ՕՐԵՐ 3-8 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2003

BALTAYAN ELECTRONIC advertisement featuring various electronic products like a camera, headphones, and a mobile phone.

PIERROT furniture advertisement for children's furniture, featuring a bed and other items.

N. DEDEIAN s.a.r.l. advertisement for sanitary wear and tiles, showing various tile patterns and bathroom fixtures.

ASHJIAN TOURS advertisement listing travel packages to various destinations like Lebanon, Cyprus, and Greece.

ՏԱՆՉՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՒՄԻ Ի ՄԵ ԶՔՆԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՁԱՒԱԽՔ

Ատենը մը ի վեր «Ազդակ»ի ընթերցողները թերթին մէջ կը կարդան. «Զաւախքի օրեր, 3 - 8 Նոյեմբեր»:

Վ. Յ. Գ. Լիբանանի Հայ Դատի Մարմինի կազմակերպութեամբ, յիշեալ թուականներուն տեղի պիտի ունենան տարբեր ձեռնարկներ, նուիրուած Պաշտօնական (ամբողջական) յայտագիրը թերթին մէջ լոյս կը տեսնէ ամեն օր, «ԱՒԱՒԱՔ» խորագիրով: Այս առիթով կ'արժէ Ձաւախքի մասին յաջորդական թիւերով մեր ընթերցողներուն տարածողութեան տակ դնել «Տանջուած ժողովուրդի մը լքուած հայրենիքը՝ Ձաւախք» խորագրեալ Վիզէն Ապագանի շաղկապ երկար յօդուածը, գոր ան գրեց Ձաւախքը իր վերադարձին, եւ որ կը մնայ այժմեակայն ու ամբողջակամօրէն կը պարզէ Ձաւախքի ներկայ իրավիճակը:

Բոլոր հայերը ունին մէկ Հայաստան, մէկ հայոց աշխարհ, որ հայրենիքն է, մայր հայրենիքը իրենց համար: Բայց, միաժամանակ, իւրաքանչիւր հայ իր Հայաստանը ունի Հայաստան աշխարհին մէջ, որ թէ՛ յենակէտ է եւ թէ՛ պատահան, որմէ կը նայի Հայաստան աշխարհին եւ աշխարհին ընդհանրապէս: Եւ այդ յենակէտն ու պատահանը իր ծննդավայրն է, եւ իր Հայաստանը: Այդպէս է Ձաւախքը Ձաւախքիներուն համար: Այդ իրենց ծննդավայրն է եւ իրենց Հայաստանը... Հայաստանի կազմէն դուրս, Վրաստանի մէջ: Իրենք աչք են բացած եւ իրենց առջին քայլերը նետած են Ջիւախի, Հաւախի, Տէրեանի եւ Դերեւիկի Դեմիրճեանի հայրենիքին մէջ, տեսած են արեւու լոյսը Սուրբնանցի, Կոթայի կաթնալոցի անմահացուցած ստեղծագործութիւններուն: Մտած են այն հողին արմատներով, որ հայրենիքն է Ստեփանոս Մայիսեանցի եւ Յարութի Մանուկեանի, Լուսինի Զաքարեանի եւ կարտիսայ Աղաճանեանի: Ձաքարեաններու պահած, թուականներին երգած ոտանոցի հայոց աշխարհի այն մասն է, որ ծնունդ առած են Հայաստանի Առաջին Հանրապետութեան դարբիններ՝ Համօ Օհանջանեանն ու Յովհաննէս Քաջազնունին, Ռուբին Տէր Մինասեանն ու Ռուբին Դարբինները: Այստեղ ամէն ինչ հարազատ է հայուն: Բարձրագոյն Արթուրն ու Միթին սարերը, Փարաւանն եւ թմկաբերդը, Կարծախն ու Գանձան, եկեղեցիներն ու ընթացը եւ առաջին Հերթին աւանդաշատ ու աւանդապաշտ ժողովուրդը հայկական բազմադարեան քաղաքակրթութեան ոսկէ կերակր կը կազմեն:

Բայց կայ նաեւ կենդանի իրականութիւնը, որ անհարգող է պատմութեան եւ աւանդապատումի չուայ գեղումներուն: Կայ իրական Ձաւախքը, Վրաստանի 53 նահանգներէն ամէնէն լքուածն ու անտեսուածը՝ Սամցխէի Ձաւախքի, որ այսօր կ'ապրի հին ժամանակներուն մէջ, աւելի նման՝ հողիւրտեան ֆիլմի մը մեծ քաղաքին, որ բեմադրիչը կարծէք դիմած է ամէն միջոցի միջնադարեան անցեալը վերականգնանքներու համար: Այստեղ ժամայայտին սլաքները կը դառնան մեր ժամանակէն դուրս...

Սամցխէի Ձաւախքի յարաբերաբար նոր անուանումը

նում մըն է: Վրացական իշխանութիւններ հայկական Ձաւախքին ազգագրական պատկերը փոխելու ճիգով մը, 90 առ հարիւր հայ բնակչութեամբ Ախալքալաքին ու Նինոծմինդային (պատմական Տաշիր գաւառը) 1993ին միացուցած են Ախալքալաքի (50 առ հարիւր հայ բնակչութեամբ) եւ վրացական գերակշիռ բնակչութիւն ունեցող Ապսինձան, Բորժոմը եւ Արզիգէնը, ստեղծելով վարչական նոր միավոր մը, որ հայեր կը կազմեն 235 հազար հայու ընկերութեան 65-70 առ հարիւրը: Մնացեալ 20-25 առ հարիւր վրացիներ են, իսկ 5 առ հարիւր՝ ռուսեր: Սամցխէի Ձաւախքի ունի 6413 քառ. քմ. տարածութիւնն է կը գրաւէ վրաստանի ընդհանուր տարածութեան 9,3 առ հարիւրը: Նահանգը բաժնուած է 6 ենթավարչական, Ախալքալաքի ունեանը լով իբրեւ կեդրոն: Ունի 7 զխաւոր քաղաքներ, 66 աւաններ եւ 125 գիւղեր:

Ձաւախք այցելութիւնը տաժանելի ուղեւորութիւն է, իսկ այնտեղ ապրիլը՝ Հերոսների համազօր է: Բնութիւնը Ձաւախքի մարզը օտար է դժուարութիւններ դիմագրաւելու այնպիսի տոկոսներով եւ չարքաշութեամբ, որոնց նմանը դժուար թէ կարելի ըլլայ գտնել սովորական հայու մօտ: «Այստեղ մնացած են հայն ու գայլը՝ ուրիշ մարդ չի կրնար ապրիլ», կը խոստովանի Նինոծմինդայի կառավարիչ Բաճակի Արզումանեան, անմիջապէս յարելով, որ «ցաւօք սրտի այսօր հարցերէ զատ չըջանին մէջ ուրիշ բան չկայ»: Այս խոստովանութիւնները անկեղծօրէն բաւական մը կը ցնցեն Ձաւախք այցելող լրագրողը, որ մինչ այդ Երեւան - Ախալքալաք 5 ժամուան գողողի ճամբան կտրած է հազարումէկ չարաքանքով եւ յուսախաբութեամբ: Կ'երեւի այդպէս է դէպի անցած տանող ճամբան: Նախ ինքնաշարժ կ'ընթացայ աֆալթապատ մաքուր ճամբէ, ապա աֆալթալթը Հետգետէ աւելի ու աւելի անորակ կը դառնայ, մինչեւ որ տեղ մը ալ վերջնականապէս անհետանայ: Ինքնաշարժը այնուհետեւ կ'ուսուստէ թուրքերու վրայէն, իսկ ուղեւորը իր սեփական ոսկորներով կը սկսի հաշուել ճամբուն իւրաքանչիւր մեթրը:

Ամէն ինչ կը սկսի երկրաշարժի արհաւիրքը պարած Գիւրդի քաղաքէն, երբ անկէ հանդիս, դէպի հիւսիս, կենքեր Հետգետէ կը մարի, կենդանութիւնը կը կորսուի, չէնքեր կ'ամայանան եւ սահմանամերձ գիւղերը կը տնքան թշուառութեան եւ խեղճութեան մէջ: Թորոս գիւղը, Ջորաշէնը, Վարդաղբիւրը, Ջոզաղբիւրը եւ մնացեալ լքեալ գիւղերը ուղեւորին անպայման կը յուշեն, որ հայրենիքը միայն չէն ու ծաղկեալ Երեւանը չէ: Միեւնոյն հայրենիքին մէջ կան չըջաններ, որոնք տակաւին գրկուած են պետական հողատերութեան, տանելի կենքեր պայմաններէ, ելիկողականութեան, արտաքին աշխարհին հետ կ'ապրի միջոցներէ եւ... ճամբաներէ, աֆալթապատ կամ նոյնիսկ՝ քարքարաւ: Միակ բացառութիւնը հաւանաբար Զուկաթեանի հիւանդանոցին անմիջական չըջակայքն է, որ կէս գիւղերուն խաւարին մէջ իսկ լոյսերուն մէջ կը լողայ: Հոռոմի պապին կողմէ չինուած այս հիւանդանոցը օրհնաբեր ներկայութիւն է չըջանին համար: Բարեգութ անձնակազմ մը այնտեղ գնահատելի ճիգերով կը փնտրէ ամուր պահել հիւսիսային Հայաստանի եւ Ձաւախքի հայրենիքէն չըջերակը, հայ մարդը իր հողին ու ապագային կապուած պահելու յուստով նախաձեռնողութեամբ:

Հայաստան - Վրաստան սահմանը կ'ապշնցնէ ուղեւորը: Նախկին խորհրդային այս երկու երկիրներուն միջեւ անցման կէտը «եա եղած, եա չեղած սահման է» տեղիներուն համար: Համայնապար բուսական կողմէ 1921ին արուեստականօրէն գծուած 164 քմ. երկարութեամբ սահման է անիկա: Աշխարհագրական եւ երկրաբանական իմաստով Ձաւախքը արդէն բնական շարունակութիւնը կը կազմէ հայկական Ծիրակին: Լոռիէն սկսեալ եւ մինչեւ Կուրի գետաբերան ուղեւորը որեւէ փոփոխութիւն չի նկատէր պատմական Գուգարք նահանգի տարբեր գաւառներու բնութեան եւ կլիմային մէջ: Կլիմայի կենսոլորտը եւ Ձաքարեաններու երբեմնի իշխանական այս կլիմայի հարբային սարահարթ է, ծովու մակերեսէն 1800-2000 մեթր բարձրութեամբ: Հարուստ է անուշահամ աղբիւրներով եւ լիճներով: Հողը բերրի է: Անտառազուրկ: Տարածուած են լեռնային տափաստանները, մերձալպեան եւ ալպեան մարգագետինները: Կլիման ցամաքային է, ամառը կարճատեւ եւ զով, ձմեռը՝ երկարատեւ եւ ցուրտ: Ժամանակին հոսկէ կ'անցնէր Ախալքալաք-Գիւմրի - Վարդապատ տարանցիկ ճամբան:

Սահմանին հայկական կողմը ուղեւորին հրաժեշտ կու տայ ցուցատախտակ մը, որուն վրայ կը կարդացուի. «ՀՀ ՆԳՆ Ծիրակի մարզի ՆԳՎ Աշոցքի ՆԳ Բաւարայի միլիցիայի սահմանային ծառայութեան քաժանցումը»: Սահման հասկացողութիւնը այստեղ անձանօթ է: Չէ՞ որ 70 տարի համայնապար վարդապետութեան ունենեցողներուն համար երկիրը, ընդհանուրին հայրենիքը Խորհրդային Միութիւնն էր, իսկ ժողովուրդը՝ «Խորհրդային ժողովուրդը»: Ազգային հայրենիքի, ժողովուրդի ու սահմանի ըմբռնումները խորթ էին եւ դատապարտելի: Հետեւաբար, ընդհանուր պետութեան սահմաններուն մէջ տեղիւրութիւնը ընթացիկ պահակատան մը փաստաթղթային ստուգումներէն աւելին չէր պահանջեր ու չի՞ պահանջեր մինչեւ օրս: Միայն թէ ինդէ, թափված ու գունատ բոնքէ՛յնը իրայ ծածանող կապոյտ-ճերմակ-կարմիր դրօշն է, որ փատր կու տայ վրաստան մուտք գործած ըլլալու: Այլապէս ո՛չ վրացական մաքառան հսկող Ձաւախքի հայ գիւնդերները, ո՛չ ալ ճամբուն երկայնքի երկու բոնքէ՛յնը քուստ միջեւ բարձրացող ու իջնող բարակ պարանք (մաշած ու կտոր-կտոր հանգոյցներով իրարու միացած) զգացնել կու տան, որ երկիրէ մը երկիր կ'անցնի կամ, աւելի՛ ցնցիչը, հայրենիքէ մը անոր սփիւռք կ'անցնիս...

Վ. ԱՒԱԳԱՆ (Շար. 1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻ

ՀԱՅՈՒՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻ

Հայաստանի Համաձայնական կառավարութեան 23 Հոկտեմբերի նիստին ներկայացուած է այս տարուան առաջին ինը ամիսներուն կառավարութեան գործունէութեան ծրագրի Հաշուետուութիւնը: Գլխաւոր 238 ծրագիրներէն չէ իրարոքման 21ը, յայտնիք՝ 8 առ հարիւրը: Մօտ 50 ծրագիր իրագործուած է ժամկէտներու խախտումով:

Լրագրողներու հետ հանդիպման ընթացքին կառավարութեան աշխատակազմի ղեկավար Մանուկ Թոփուզեան շեշտեց, որ բազմաթիւ որոշումներ չեն տրուած, որովհետեւ անոնցում կանոնակարգուելիք յարաբերութիւնները արդէն կանոնակարգուած են Ազգային ժողովին կողմէ ընդունուած օրէնքներով:

Ըստ Մանուկ Թոփուզեանի, փորձառութիւնը ցոյց կու տայ, որ որոշ ծրագիրներու կամ միջոցառումներու չիրագործման պատճառներն մէկը կ'առնչուի գործընկերակցային խնդիրներու հետ: Դարձեալ աշխատակազմի ղեկավարին կարծիքով, ասկէ կարելի հետեցնել, որ որոշ հարցերու մէջ փոփոխութիւններու եւ լրացումներու անհրաժեշտութիւնը:

Մանուկ Թոփուզեան իրագործուած աշխատանքներուն մէջը մասնաւորապէս կարեւոր նկատեց Արզումանեանի յաղթահարման ռազմավարական ծրագիրը եւ փտանութեան դէմ պայքարի ծրագիրը:

59 ՊԵՆՏԱՆԻՆՊՈՒՈՒՄՈՒՄԻ ՄԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՆՅ ՅԱՆՉՆԱՆՈՒԹԵԱՆ

Հայաստանի նախագահին առաջին ծրագրային իրականաց յանձնարարութեամբ անցեալ մէկ ամսուան ընթացքին Հայաստանի քաղաքացիներէն ստացած է 59 դիմումներ: Յանձնարարութիւնը վերջին նիստին աւազ մասնաւոր Արթուր Տօնապետեանի ներկայացուցած գեկուցումին մէջ նշուեցաւ, որ այդ բողոքներուն համար կատարուած են անհրաժեշտ միջնորդութիւններ եւ օրէնքով սահմանուած կարգով դիմումներ փոխանցուած են պատկան մարմիններուն:

Յանձնարարութեամբ դիմում ստացած է «Նոր Հայաստան» մարդասիրական հասարակական կազմակերպութեան նախագահը: Մնացեալ յանձնարարութեամբ են բերաններուն անձնագիրներ տրամադրելու անհրաժեշտութեան կապակցութեամբ: Մնացեալ յանձնարարութեամբ են բերաններով դիմումը, միջնորդած է Հայաստանի ոստիկանութեան մօտ՝ լուծուած տալու այս հարցին: Ոստիկանութիւնը պատասխանած է, որ մնայուն, ժամանակաւոր եւ փաստացի բնակչութեան վարչընտրուած Հայաստանի քաղաքացիներուն անձնագիրներ տրամադրելու հարցը ներկայիս կը քննարկուի ոստիկանութեան իրաւասու վարչութիւններուն կողմէ:

Ըստ Ա. Տօնապետեանի, օդակայանի ղեկավարութեան դէմ դիմում-բողոք ներկայացուցած են ճամբորդներ փոխադրող վարձու ինքնաշարժի 50 վարորդներ այն հարցին մասին, որ օդակայանի ոստիկանութիւնը իրենց դէմ ընդունուելիք կը կիրարկէ ճամբորդները այս պատճառով կը փոխադրուին վարձու կրկնապատկած է: Այս իրողութիւնը բուսականօրէն համար յանձնարարութեամբ միջնորդութիւնը ներկայացուցած է Հայաստանի դատախազութեան:

ԳԻՄՈՒՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻ

Հայաստանի առևտուրի եւ տնտեսական զարգացման նախարարութեան վարչութեան պետ Մերութան Յակոբեան լրագրողներու հետ հանդիպման մը ընթացքին յայտնեց, թէ «Նայիրի 2» գործարանի քառուկուրէ պատրաստութեան նոր արհեստագիտութեամբ Ձինաստանի մէջ միացեալ ձեռնարկութիւն մը բանալու նախագիծը շահաւէտ է, եւ թէ հայկական կողմը այս ձեռնարկութեան պիտի ստանայ շահուն 40 առ հարիւրը, այս ձեւով ալ Հայաստան մուտք պիտի գործէ ինքնակազմ մեծ շուկային մէջ:

Ըստ Ա. Յակոբեանի տեղեկութիւններուն, Ձինաստան հանդէս եկած է նոր առաջարկով՝ Հայաստանի մէջ նոյնպէս բանալու այսպիսի միացեալ ձեռնարկութիւն մը՝ այս պարագային 60 առ հարիւր շահ ձգելով Հայաստանին:

ՊՈՒԼԿԱՐԻՆ ԶԱՐԿԱՅԻՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԱՆՈՂ ԵՆՈՅԹՆԵՐԸ

Պուլկարի քաղաքին մէջ տեղի ունեցած ֆիլհարմոնիք նուագախումբի միջազգային փառատօնին յաջողութեամբ հանդէս եկած է Հայաստանի Ազգային Օփերայի եւ Պայիթի Թատրոնի ղեկավար Յարութիւն Արզումանեան: Վիտինի ֆիլհարմոնիք նուագախումբ-

բի 65ամեակին նուիրուած փառատօնին մասնակցած են ղեկավարներ Գերմանիայէն, Իտալիայէն, Միացեալ Նահանգներէն եւ Աւստրիայէն, Յ. Արզումանեանի Փլենելի եւ Վիտինի ֆիլհարմոնիք նուագախումբերուն հետ ունեցած համերգներուն ընթացքին հնչած են Մոցարթի, Ռոսինիի եւ Պարմարի ստեղծագործութիւնները: Յ. Արզումանեան միակն էր, որ երկրորդ անգամ ըլլալով այդ փառատօնին մասնակցելու հրաւեր ստացած էր:

Ըստ Յ. Արզումանեանի, կազմակերպիչներուն իսկ խոստովանութեամբ այս երեւոյթը պայմանաւորուած էր Հայաստանի երաժշտական դպրոցին նկատմամբ ունեցած հետաքրքրութեամբ, եւ այս հետաքրքրութիւնը ոչ մէկ ձեւով կը գիլի երկրպագու երկիրներու ճանչցուած դպրոցներուն նկատմամբ եղած հետաքրքրութեան:

Յարութիւն Արզումանեան կարելոր նկատելով տարբեր նուագախումբերու հետ շփումը նշեց, որ անիկ կարելիութիւն կ'ընձեռէ հաղորդակցութեամբ տարբեր երկիրներու կատարողական աւանդութիւններուն եւ փորձին, ինչպէս նաեւ ձեռք բերել հմտութիւններ: Փառատօնի աւարտին Յ. Արզումանեան համերգներու նոր առաջարկներ ստացած է:

ԳԵՄԱՆՈՒՄ ՕՐՏՈՒՆԵՅ ՔՆՆԱԿՅՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

13 - 14 Հոկտեմբերին Ծիքակոյի մէջ տեղի ունեցած «Դեսպան-Միլիտը Հանդիպումներ»ու աշխատանքային նստաշրջանին, Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան ձոն Օրտուէլի հանդիպում ունեցաւ ամերիկահայ գաղութի աւելի քան 40 ներկայացուցիչներու հետ: Հանդիպման ընթացքին, որուն կազմակերպիչներուն շարքին էր նաեւ Միացեալ Նահանգներու Միջազգային Չարգացման Գործակալութեան մտօրէն Քիթ Սթրոնգը, յուսեցան զեւրոպայի Հայաստանի աշխատակիցներ Թրագաքականութեան նպատակները՝ Հայաստանի բնակչութեան արդիւնաւէտ աշխատութիւնը ցուցաբերելու միջոցով:

Մասնակիցները քննարկեցին շրջանի ընթացիկ քաղաքական եւ սնտեսական պարզագումներ եւ Միացեալ Նահանգներու դերը Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման մէջ: Դեսպանը նշեց, որ սիւլուաթաձայնը «այն հիմնական դարձնելիքներն են, որոնք կ'օգնեն իրականացնելու Միացեալ Նահանգներու քաղաքականութեան նպատակները՝ Հայաստանի բնակչութեան արդիւնաւէտ աշխատութիւնը ցուցաբերելու միջոցով»:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄՈՒՄԻ ՆՈՐ ԷԶ

Հայաստանի Ազգային ժողովը վերջերս ունեցաւ բարեփոխուած համացանցային նոր էջ մը՝ նախաձեռնութեամբ Ազգային ժողովը քարտուղարութեան եւ աշխատակազմը Միացեալ Նահանգներու Միջազգային Չարգացման Գործակալութեան: Էջին բարեփոխման հիմնական նպատակը, ինչպէս նշեց Ազգային ժողովը քարտուղարութեան հիմնական ղեկավարը, խորհրդարանի աշխատանքը աւելի թափանցիկ ու բնակչութեան հասանելի դարձնելն է: Էջի մէջ կան մօտ տասնեակ մը խորհրդներ՝ խորհրդարան, Ազգային ժողովի նախագահ, պատգամաւորներ, յանձնարարութեամբ, օրհնաբերութիւն, նախագիծեր եւ այլն: Էջին մէջ ներառուած են ոչ միայն ընդունուած օրէնքները, այլեւ շրջանառութեան մէջ դրուած բոլոր օրինագիծերը, իսկ «Իմ պատգամաւոր» խորհրդը պիտի նպաստէ պատգամաւոր եւ ընտրող կապին:

Եւալեզու համացանցային էջը կարելիութիւն պիտի ընձեռէ ծանօթանալու Հայաստանի խորհրդարանի պատմութեան, հիմնական գործունէութեան, Ազգային ժողովի խումբ-խմբակցութիւններու եւ միջխորհրդարանական յանձնարարութեան աշխատանքներուն:

ՀԱՄԱՆԱԿՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԳԻՆԵՐԸ ԱՆՅՅԵԱԼ ՏԱՐՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻ

Հայաստանի Համախառն ներքին Արդիւնք (ՀՆԱ) այս տարուան Յունուար-Սեպտեմբերին անցեալ տարուան նոյն ժամանակաշրջանի համեմատութեամբ կազմած է 115 առ հարիւր, իսկ 2003 Սեպտեմբեր Օգոստոսի համեմատութեամբ 147,4 առ հարիւր:

Ըստ ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներուն, այս տարուան առաջին ինը ամիսներուն, ճարտարարտուած արտադրութեան ընդհանուր ծաւալին աճը նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանի համեմատութեամբ կազմած է 120,5 առ հարիւր:

Նոյն ժամանակաշրջանին զիւրառում-տեսութեան համախառն արտադրանքը աճած է 0,5 առ հարիւր, իսկ արտադրուած երկարակալութեան քանակը պակասած է 1,5 առ հարիւրով:



AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՑՈՒՅԱՄԱՐԱՐԸ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ԺՈՂՈՎԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՆՆԵՐԸ

Ինչպէս ծանօթ է, 23-25 Հոկտեմբեր 2003ին, Անթիլիասի Մայրա-վանքին մէջ, հրաւերով եւ նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսին, տեղի ունեցաւ ժողով մը՝ մասնակցութեամբ Ազգային կեդրոնական վարչութեան կրօնական ու քաղաքական ժողովներուն, թեմակալ առաջնորդներուն եւ ազգային իշխանութեանց ներկայացուցիչներուն: Եւրոյ 50 հոգիներ մասնակից դարձան այս ժողովին եւ միասնաբար քննարկեցին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան առաքելութեան կապուած շարք մը այժմէական հարցեր:

Սոյն ժողովին հիմնական նպատակն էր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան առաքելութեան առնչուած ընդհանրական հարցերու, ինչպէս նաեւ կաթողիկոսարան-թեմ գործակցութեան հետ աղերս ունեցող խնդիրներու քննարկումը ու յատկացումը: Բացման ու հայրապետական ողջոյնի խօսքը կատարելով՝ վեհափառը նախ ընդհանուր դիմերով ներկայացուց վերջին շրջանին կաթողիկոսարանին կատարած աշխատանքները, ընդգծելով յատկապէս շարք մը մտահոգութիւններ, ծրագիրներ ու մարտահրահչւներ, որոնք կարեւորութեամբ պէտք է նկատի առնուին կաթողիկոսութեան ընդհանուր առաքելութեան ծիրին մէջ: Այս վեհափառը իր խօսքը եզրակացուց հետեւեալ բառերով. «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ս. Աթոռը հայ եկեղեցւոյ եւ ընդհանրապէս մեր ժողովուրդի կենսաբնական իր կարեւոր եւ իւրաքանչիւր տեղն ու դերը ունի: Այս Ս. Աթոռին կենսաբնական նպատակը ու ճամբան ծառայութիւնն է. ծառայութիւն՝ հայ եկեղեցւոյ, ծառայութիւն՝ հայ ժողովուրդին, ծառայութիւն՝ հայրենիքին եւ այն բոլոր նուիրական արժեքներուն, սրբութիւններուն ու ձգտումներուն, որոնք վաւերական էութիւնը կը կազմեն հայ ժողովուրդին: Մեր Ս. Աթոռը այս նախաձեռնողութեամբ ու յանձնարարութեամբ պիտի ծառայէ՝ անցեալի հաւատարմութեամբ եւ ապագայի տեսիլքով:

«Հայրապետական այս դարաւոր Ս. Աթոռը պիտի ծառայէ մեր ժողովուրդին Ամենայն Հայոց հայրապետութեան եւ մեր եկեղեցւոյ նուիրապետական միւս աթոռներուն հետ միասնաբար ու գործակցաբար՝ փոխադարձ հասկացողութեան ու մեր եկեղեցին յուզող հարցերուն լուծման ճամբաներ որոնելով ու մեր եկեղեցին զիմազրաւող ներկայ օրերու հրամայականներն ու մարտահրահչւները միասնաբար դիմագրաւելով:

«Մեր Ս. Աթոռը պիտի ծառայէ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, մեր կենսաբնական ընդհանուր ժողովուրդին կառույցներուն հետ զործակցաբար: Անթիլիասը պիտի շարունակէ գործնապէս մասնակից դառնալ ազդաշինութեան ու հայրենասիրութեան նուիրական դործին՝ իր յստակ տեսակէտը ունենալով մեր ազգը, հայրենիքն ու եկեղեցին յուզող խնդիրներուն նկատմամբ:

«Գժուար է մեր ազգի ճամբան. մեր ազգի ներքին պայմանները եւ մեզ շրջապատող պայմանները կաճախ նպաստակոր չեն: Այս բոլորին դիմաբար Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան իր կարելին կը կատարէ ու պիտի կատարէ՝ հաւաքական հաւատարմով, յոյսով ու վճռականութեամբ շարունակելու իր հաւատքի առաքելութիւնը ու ազգային ծառայութիւնը»:

Վեհափառին բացման խօսքին ետք ժողովը նախապէս ճշդուած օրակարգի համաձայն եւ պարտաւորուած աշխատանքային ուղեգիծի նիւրու լույսին տակ հետեւեալ յոսակեցումներն ու եզրայանգումներն կատարեց.

1.- Կրօնական դաստիարակութիւն
Կարեւորութեամբ շեշտուեցաւ կրօնական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, իրրեւ առանցքը հայ եկեղեցւոյ առաքելութեան: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանը եւ անոր թեմերը հսկայածաւալ աշխատանք կը տանին այս ուղղութեամբ, յատուկ ծրագիրներու մշակումով: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Բրիտանիան կան Դաստիարակութեան Բաժանմունքը կը շարունակէ իր լայն աշխատանքները բերել թեմերու աշխատանքին: Այս ծիրին ներս թելադրուեցաւ, որ Անթիլիասի բաժանմունքին եւ թեմերու կրօնական դաստիարակութեան յանձնախումբերուն միջեւ գոյութիւն ունեցող գործակցութիւնը աւելի ամրապնդուի՝ յատկապէս Անթիլիասէն ծրագիրներ, ուղեցոյցներ զրկելով, ինչպէս նաեւ միաբաններ ուղարկելով թեմեր՝ օգտակար ըլլալու թեմերու աշխատանքներուն: Նաեւ թելադրուեցաւ, որ կարելիութիւններ ստեղծուին կաթողիկոսարանի կրօնական բնոյթ ունեցող հրատարակութիւնները ժողովուրդին սեփականութիւնը դարձնելու:

2.- Ընկերային ծառայութիւն
Ընկերային ծառայութիւնը եւս անբաժան մասն է եկեղեցւոյ առաքելութեան: Վեհափառը տարիներ անալ թելադրած էր առաջնորդ սրբազաններուն յատուկ ուշադրութիւն դարձնելու այս մարզին, թեմակալ աշխատանքներու շրջագիծէն ներս: Ուրախութեամբ նկատուեցաւ որ իւրաքանչիւր թեմ իրեն յատուկ պայմաններու ու կարիքներու լույսին տակ գնահատելի գործունէութիւն ունեցած է այս դժով: Ժողովը յատուկ կերպով թելադրեց, որ ընկերային ծառայութեան աշխատանքները յառաջ տարուին ծրագրուած կերպով, յատկապէս ժողովուրդի կենսաբնական անմիջականօրէն առնչուած ծրագիրներու մշակումով: Վեհափառը իր խօսքին մէջ յատուկ թելադրութիւններ կատարեց այս ուղղութեամբ, շեշտելով օտար հաստատութիւններուն հետ յարաբերութեանց եւ կաթողիկոսարանի կողմէ կատարուելիք աշխատանքներուն կապուած շարք մը կէտեր:

3.- Դպրեվանք
Դպրեվանքը ժողովականներուն յատուկ ուշադրութեան առարկան դարձաւ: Որոշուեցաւ 2005 թուականին համազգային շուրջով նշել դպրեվանքի 75ամեակը բոլոր թեմերուն մէջ: Այս առիթով տեղի պիտի ունենան ձեռնարկներ, հանդիսութիւններ ու հանգանակութիւններ՝ ի հետեւում վեհափառին սրբատառ կոնդակին: Այս առիթով նաեւ Անթիլիասի մէջ տեղի պիտի ունենան միաբանական հաւաք, ինչպէս կին դպրեվանքիներու հանդիպում, բարեբարներու հաւաք, ինչպէս նաեւ բոլոր գաղութներուն մէջ պիտի ստեղծուին նախկին դպրեվանքներու սանուց միութիւններ:

4.- Հայ դպրոց եւ հայեցի դաստիարակութիւն
Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար հայ դպրոցը կը մնայ հիմնական առաջնահերթութիւն: Մեր բոլոր թեմերուն մէջ հայ դպրոցներու լայնածիր ցանցը կը գործեն թեմական իշխանութեանց հովանաւորութեամբ ու աշխատութեամբ: Մեր Ս. Աթոռը եւս կը շարունակէ յատուկ նախաձեռնողութիւն ու աշխատութիւն ցուցաբերել հայ դպրոցի առաքելութեան ու ընդհանրապէս հայեցի դաստիարակութեան ուղղութեամբ: Այս տարի Փետրուարին Անթիլիասի մէջ վեհափառին նախագահութեամբ տեղի ունեցած էր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու ուսումնական խորհուրդներու հանդիպում, որուն ընթացքին յատուկ առաջարկներ ներկայացուած էին կաթողիկոսարան: Վեհափառը յայտնեց, որ այդ առաջարկներէն, օրինակ, կրօնի դասաւանդութեան յատուկ ուղեցոյցի պատրաստու-

թիւն, մանկական մատենաշարի հրատարակութիւն, երիտասարդ ծնողներու յատուկ կրօնարարական սեմինարներու կազմակերպում, արդէն իսկ կը կատարուին կաթողիկոսարանին կողմէ: Վեհափառը նաեւ յայտնեց, որ հայեցի դաստիարակութեան համազգային համագումարի մը կազմակերպումը, ինչպէս նաեւ հանդեսուած կողմնակցութիւններու յատուկ հիմնադրամի մը հաստատումը ընթացքի մէջ են գործակցութեամբ Գաղուստ Կիլիկիական Հիմնարկութեան: Վեհափառը եւ Ազգային կեդրոնական վարչութիւնը յիշեցուցին Ազգային Ընդհանուր ժողովի որոշումը, նկատառելի օգտակար հանդիսանալու Լիբանանի Ազգային վարժարաններուն:

5. Հայ ժողովուրդի իրաւունքներու հեռապնդում
Հայ ժողովուրդի իրաւունքներու հեռապնդումը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան առաքելութեան կարեւոր երեսներէն մէկն է: Վեհափառը յայտնեց, թէ այս բնագաւառին մէջ մեր Ս. Աթոռը պիտի շարունակէ իր կարեւոր դերը թէ մեր թեմերու ճամբով եւ թէ միջազգային մակարդակի վրայ, միջեկեղեցական ու միջկրօնական գործակցութեան եւ պետութիւններուն ու միջազգային կազմակերպութիւններուն հետ իր ունեցած յարաբերութեանց ճամբով: Ժողովը շեշտեց Տէր Զօրի կարեւորութիւնը՝ իրրեւ մեկնաբան մեր ազգային պահանջատրութեան: Հետեւաբար մեր թեմերը յատուկ ուշադրանքով թելադրեցին պէտք է կազմակերպեն դէպի Տէր Զօր, մէկ կողմէ վառ պահելով մեր ժողովուրդի կենսաբնական մէջ Տէր Զօրի խորհուրդը, միւս կողմէ՝ յիշեցնելով աշխարհին Տէր Զօրի պատգամը:

6.- Գործակցութիւն Հայ եկեղեցւոյ նուիրապետական արձույտներուն հետ
Վեհափառը զրական ու սիրալիք նկատեց հայ եկեղեցւոյ նուիրապետական աթոռներուն հետ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարաբերութիւնը: Ան յատուկ կերպով անդրադարձաւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի ու Կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռներուն հետ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ունեցած եղբայրական կապերուն: Միաժամանակ վեհափառը բաւա, թէ պէտք է ըլլալ իրապաշտ: Մեր եկեղեցւոյ կենսաբնական մէջ զգայնութիւններ ու մտահոգութիւնները գոյութիւն ունին, եւ մեր եկեղեցին հսկայ մարտահրահչւներու դիմաց կը գտնուի: Հետեւաբար, չենք կրնար անտարբեր մնալ այս կացութեան դիմաց: Հակառակ բոլոր տեսակի զժուարճութիւններուն՝ անհրաժեշտ է, որ մեր եկեղեցւոյ ներքին միասնականութիւնը ամրապնդենք՝ առաւելագոյն չափով գործակցութիւն ստեղծելով մեր եկեղեցւոյ կենսաբնական գնազաններուն մէջ: Առաջնորդ սրբազաններ եւ ազգային ժողովականներ եւս այս դժով արտայայտուեցան եւ ժողովը ընդառաջելով վեհափառի առաջարկին՝ համաձայն գտնուեցաւ, որ ի հետեւում վերջին Ազգային Ընդհանուր ժողովին ուղղած վեհափառի պատգամին ու նոյն ժողովի որոշումներուն, անմիջապէս ձեռնարկուի խօսակցութեան ու խորհրդակցութեան գործընթացի մը: Եղբայրական սիրոյ ու փոխաբերութեան հասկացողութեան մթնոլորտի մէջ տեղի ունենալիք խօսակցութեան ընթացքին անհրաժեշտ է քննել մեր եկեղեցւոյ դիմադրուած բոլոր զժուարճութիւնները, մտահոգութիւններն ու ինքի իրենցը, ինչպէս նաեւ հայ եկեղեցւոյ բարեկարգութեան առնչուած հարցերը: Գոյութիւն ունեցող հարցերու քննարկման ու լուծման հարկ է մտենալ համապարփակ հայեցակէտով ու իրապաշտ կերպով՝ նկատի ունենալով մեր գաղութներուն ներքին իւրաքանչիւր դրուածքները եւ զիրենք շրջապատող պայմանները: Այս խօսակցութեանց նպատակը պէտք է ըլլայ հայ եկեղեցւոյ ներքին միութեան ամրապնդումը ու անոր հաւատքի առաքելութեան վերանորոգումը եւ հզորացումը՝ նուիրապետական աթոռներու ամրողական մասնակցութեամբ ու գործակցութեամբ:

7.- Հայաստան-Սփիւռք գործակցութիւն
Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը հրամայական առաջնահերթութիւն է մեր ժողովուրդին համար: Այսպէս կը հաւատայ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը: Անցնող տարիներուն մեր Ս. Աթոռը գործակցութեան ցոյց տուած է իր յանձնարարութիւնը Հայաստան-Սփիւռք գործակցութեան ամրապնդման նկատմամբ: Այս շրջագիծէն ներս հետեւեալ յիշեցումները կատարուեցան. առաջին, Հայաստանի հզորացումը՝ պետական կառույցներուն ամրապնդումով, հողերու կենսաբնական աճումով, մշակութային կենսաբնական ծաղկումով եւ հայրենի ժողովուրդի տնտեսական կենսաբնական զարգացումով, կը նկատուեց հրամայական: Այս հետանկարով մեր թեմերը պէտք է շարունակեն իրենց գործնական մասնակցութիւնը բերել հայրենակերտումի աշխատանքներուն: Երկրորդ, Սփիւռքի հզորացումը եւս կը նկատուեց հրամայական: Զօրեղ Հայաստան կ'ենթադրէ զօրեղ Սփիւռք: Սփիւռքի մեր կառույցները այսօր փաստօրէն կը գտնուին հսկայ զժուարճութիւններու դիմաց: Անոնց վերանորոգումը, այժմէականացումը, աշխուժացումը ու տնտեսական վերականգնումը առանցքային կարեւորութիւն կը ներկայացնեն մեր թեմերուն համար: Երրորդ, Հայաստանին կատարուած օգնութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանի հետ թեմերու յարաբերութիւնները պէտք է ներդաշնակուին եւ ըլլան կաթողիկոսարանին ճամբով:

1.- Հայաստանի վերանկախացումէն ետք Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր թեմերով տնտեսական հսկայ օժանդակութիւն կատարեց: Օժանդակութիւնները կատարուեցան առաւելաբար «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին ճամբով եւ նաեւ՝ այլ միջոցներով: Երբեմն թեմեր իրենք նախաձեռնողը եղան գանազան ծրագիրներու եւ երբեմն ընդառաջեցին Հայաստանէն իրենց առաջարկուած ծրագիրներուն: «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին հետ կաթողիկոսութեան եւ իր թեմերուն բնական գործակցութիւնը պիտի շարունակուի: Սակայն մեր Ս. Աթոռին կողմէ Հայաստանին կատարուած օգնութիւնը աւելի ազգու, տիրական, ծրագրուած ու համադրուած դարձնելու, եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ եղած օժանդակութիւններու ամբողջականութիւնը պահելու նախաձեռնողը թեմերում՝ որոշուեցաւ հետեւեալ գործելաձեւը որդեգրել:

ա) Կաթողիկոսարանին եւ իր թեմերուն կողմէ Հայաստանին եւ Հարաբարի կատարուած օժանդակութիւնները պէտք է մէկ ամբողջութեան ծիրին մէջ դիտուին, քննուին, ճշդուին, ծրագրուին ու հետապնդուին: Այս ծիրին մէջ անհրաժեշտութեան պարագային նկատի կ'առնուին:

բ) Կաթողիկոսարանին մէջ յատուկ յանձնախումբ մը պէտք է կատարուող աշխատանքները ճշդէ, համարէ եւ անոնց գործադրութեան վերահսկէ:

գ) Կարելի է ծրագրիներու օժանդակել իրրեւ կաթողիկոսութիւն, բոլոր թեմերու մասնակցութեամբ: Այս գործելակերպը պէտք է առաջնահերթութիւն ստանայ: Կարելի է նաեւ, որ թեմ մը կամ խումբ մը թեմեր (օրինակ՝ Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերը, կամ արաբական հայ երեք թեմերը) հաւաքական ծրագիր մը որդեգրեն՝ միշտ տեղեկ պահելով կաթողիկոսարանը: Կարելի է նաեւ անհատ լարերարները գտնել յատուկ ծրագիրներու համար:

ԼԻՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Կ'ԱՐՇԱԻԷ ԴԷՊԻ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՓԱՅԼՈՒՆ ԱՊԱԳԱՅ



Գոհունակութեամբ կը համակուինք յաճախ, երբ միջազգային մակարդակի վրայ եւ տարբեր բնագաւառներու մէջ յաջողած անձերու մասին կը կարդանք: Որքան ալ փոքր կամ մեծ ըլլայ անոնց հուշակն ու ներդրումը, մենք ուրախութեամբ կ'ողջունենք անոնց յաջողութիւնները, գանտը նկատելով նաեւ մեր յաջողութիւնները:

Պարագան նոյնն է, երբ խօսքը կը վերաբերի միջազգային մամուլի մէջ դիրքեր գրաւող հայ անհատներու: Ժամանակաշրջանի մը մէջ, ուր քաղաքացիութեան այնքան կարեւոր դեր կը խաղայ, յիշեալ անձերը ըլլան դիտակից ազգային առումով, կրնան ուղղակի թէ անուղղակի միջոցներով աշխարհին ներկայացնել մեր դատը թէ մշակոյթը:

Միջազգային մամուլին մէջ յօդուածներով հանդէս եկող հայ լրագրողները եւ յօդուածագիրները ընդարձակ փառանքին երիտասարդ անդամներէն մէկն է Լին Արրահամեան: «Թիւրքի Տայնէսք» Օգոստոս 2003ի թիւին գլխաւոր նիւթերէն մէկն էր Աթոմ էկոյեանի հետ անոր հարցազրոյցը:

Լին Արրահամեանը 1997ին աւարտած է Մոնրէալի «Մաքիլի» անուանի համալսարանի անգլերէն գրականութեան բաժանմունքը, իսկ 2000ին արժանացած է լրագրութեան մագիստրոսի վկայականին «Քոնքորտի» համալսարանէն:

Քանատայի մէջ շարք մը օրաթերթեր աշխատակցելէ ետք, ան սկսած է լիաժամ աշխատել «Թիւրքի Տայնէսք» խմբագրատան մէջ, իրրեւ ուսումնասիրութիւններ կատարող եւ յօդուածագիր:

«Ազգակը նորանոր յաջողութիւններ կը մարտնչէ երիտասարդ, խոստմնայից ու փայլուն լրագրողուհի Լին Արրահամեանի:

ՊԱՊԱՍԻԱՆԵԱՆԻ ՀՄԱՅԻՉ ԵԼՈՅԹԸ՝ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Որոգացական ապրումներով եւ հոգեկան ներդաշնակութեամբ, դամասկահայութիւնը առիթ ունեցաւ հայրենի աշխարհահոյակ երաժշտարուեստագէտ Արամ Նույնարուեստին ծննդեան հարիւրամեայ յիշատակին նուիրուած երաժշտական երեկոյ մը ապրելու եւ թափանցելու երաժշտութեան անդամատանին մէջ, ապրելով այնպիսի վերագրական պահեր, ուր կը լսուէր լին ուղադարձներուն գրոյցը եւ կը տեսնէր երաժիշտներու մասններու սլաքը անոնց վրայ:

Երոյթը կատարուեցաւ հովանաւորութեամբ մշակոյթի նախարար Մահմուտ Սայէտի եւ միացեալ կազմակերպութեամբ՝ մշակութի նախարարութեան, Սուրիոյ Երաժշտական Լրագրողական Հիմնարկի եւ Հայաստանի դեսպանատան:

Ձեռնարկին ներկայ էին Հայաստանի դեսպան Լեւոն Սարգսեան, այլ երկրներու դեսպաններ ու ներկայացուցիչներ:

Նուազահանդէսին ասպետը հանդիսացաւ հայրենի անուանի արուեստագէտ Արմէն Պապախանեան, որուն մասններուն թողած հրապարակուած հպարտանքը դաշնակին վրայ՝ կարողացան փոխադրել ներկաները դէպի հայրենի աշխարհ:

Իսկ ձեռնարկին հերոսն էր Սուրիոյ պետական սիմֆոնիք նուազատուրիի ղեկավար, դամասկահայ գաղութի արժանաւոր գաւակներէն՝ Միսաք Պապուսարուեստեան, որ մեծ կարողութեամբ եւ յիշատակելի ճարտարութեամբ յաջողեցաւ վարել հանդիսութիւնը՝ փաստելով հանրութեան թէ հայ մարդը գանազան մարզերու մէջ ցուցաբերած իր ջանքերով ու տաղանդով կրնայ ըլլալ գերագանց, նոյնիսկ՝ օտար երկրներու մէջ:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ծարաթի, 18 Հոկտեմբեր 2003ին, Դամասկոսի Ազգային Օփերայի սրահին մէջ, եւ անոր ընթացքին ներկայացուցան Արամ Նույնարուեստեանի ստեղծագործութիւններէն գանազան գործեր, որոնցմէ յիշատակելի էր հայրենի թատերի է «Դաշնամուրի Բնուէրը» Արմէն Պապախանեանի կատարողութեամբ եւ «Գալիլեո» պայլէն, որուն հայկական շունչով աւարտեցաւ նուազահանդէսը:

Ներկայացման ընթացքում մակարդակով կատարողութիւնը խիտ դնաստանքի արժանացաւ հանդիսատեսներուն կողմէ, եւ ցուցաբերուած յաջողութեան շնորհիւ ձեռնարկը կրկնուեցաւ Երեքշաբթի, 21 Հոկտեմբեր 2003ին:

ՄԵՆԱՐ ՊԵՏՈՍՅԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնել հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, Մինչև ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ ԺՈՂՈՎԻՆ 5:00:

Թուրքիա - Կարգապահ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՆԵՐՈՒ ԽՈՍՏՈՒՆԵՐԵ ԵՏԶ

ԹՈՒՐԲԻԱ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԴՆՇԵԼ ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Թուրքիայի կառավարությունը կր շարունակել էր մրցանիշը պահել խօսքի ազատության ճնշումները ընթացքին մէջ՝ հակառակ բարեկարգումներ իրագործելու ձեռնարկներին։ Ըստ Արդարութեան եւ Ժողովրդավարութեան նախարարության կողմից հրատարակված զեկոնոմիկա ծրագրի մեջ էր ներկայացված, որ իրականացվող քաղաքական փոփոխությունները կհանգեցնեն իրականացվող քաղաքական փոփոխությունների։ Այդ մէկը վերջերս բացառապես իրականացված չէր։ Ըստ Արդարութեան եւ Ժողովրդավարության նախարարության կողմից հրատարակված զեկոնոմիկա ծրագրի մեջ էր ներկայացված, որ իրականացվող քաղաքական փոփոխությունները կհանգեցնեն իրականացվող քաղաքական փոփոխությունների։



Հարաբոլու

Թրքական կառավարությունը ձեռնարկել էր պատկերասրահի «Մեկ կերպ» անվան կայանի լրագրող Եմին Գուլբազը եւ անոր օգնական Անեսթիա Մուսթաֆայի, Տրապիզոնի մաս, ծայրահեղ քաղաքական մեթոդները կիրառող լրագրող յայտարարել էր, որ իրականացվող քաղաքական փոփոխությունները կհանգեցնեն իրականացվող քաղաքական փոփոխությունների։ Այդ մէկը վերջերս բացառապես իրականացված չէր։ Ըստ Արդարութեան եւ Ժողովրդավարության նախարարության կողմից հրատարակված զեկոնոմիկա ծրագրի մեջ էր ներկայացված, որ իրականացվող քաղաքական փոփոխությունները կհանգեցնեն իրականացվող քաղաքական փոփոխությունների։

Եւ իրականացվող քաղաքական փոփոխությունները կհանգեցնեն իրականացվող քաղաքական փոփոխությունների։ Այդ մէկը վերջերս բացառապես իրականացված չէր։ Ըստ Արդարութեան եւ Ժողովրդավարության նախարարության կողմից հրատարակված զեկոնոմիկա ծրագրի մեջ էր ներկայացված, որ իրականացվող քաղաքական փոփոխությունները կհանգեցնեն իրականացվող քաղաքական փոփոխությունների։ Այդ մէկը վերջերս բացառապես իրականացված չէր։ Ըստ Արդարութեան եւ Ժողովրդավարության նախարարության կողմից հրատարակված զեկոնոմիկա ծրագրի մեջ էր ներկայացված, որ իրականացվող քաղաքական փոփոխությունները կհանգեցնեն իրականացվող քաղաքական փոփոխությունների։

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ Կ'ՂՆԴԻՄԱՆԱՅ ԹՐՔԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԻՐԱԳ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը իր ձայնը միացրեց թրքական ուժերու իրաք գործողության դէմ բողոքող ընդհանուր ալիքին, հաղորդագրութեամբ մը յայտարարելով, որ թրքական ուժերու ներկայութիւնը խանգարիչ ազդակ պիտի ըլլայ։

Յանձնախումբը յայտարարեց, թէ իրաքի մէջ թրքական ուժերու տեղադրումին կ'ընդդիմանայ երկրին կառավարող խորհուրդը եւ այդ հարցը խոր տարակարծութիւններ ստեղծած է ամբողջ աշխարհին մէջ, այն մտաւարկութեամբ, որ թուրքերը կրնան քաղաքական կացութիւնը, երկրի էթնիք այսպէս կ'ընկերակցուի եւ ուժանիւթի ազդեցութեամբ շահագործել՝ աւելի եւս սրելով արդէն իսկ լարուած կացութիւնը իրաքի մէջ։

Յանձնախումբի Ուաշինկթընի գրասենեակի վարիչ տնօրէն Արամ Համբարեան յայտարարեց. «Ոչ ամերիկեան արժէքային համակարգին, ոչ ալ ամերիկեան շահերուն համար նպաստաւոր է օսմանեան աւանդութիւններով, ներքին բռնութիւններով եւ արտաքին յարձակողական քաղաքականութեամբ յայտարարուած թրքական ուժերու իրաք տեղադրումը։ Այն ուժերը, զորս թուրքիա պարտիի ձեռք իրաք գործողութեան (հակառակ զինակցութեան ուժերուն դիմաց իրաքի հետ իր սահմանը փակ պահելու որոշումին), արդէն իսկ խանգարիչ դերակատարութիւն սկսած է ունենայլ եւ ամերիկեան ուժերուն հետ տրամագծօրէն հակառակ դիրքերու վրայ են։ Թրքական ուժեր իրաք գործողութեան որոշումը կրնայ աւելի մեծ խնդիրներ յառաջացնել։»

Միւս կողմէ, Ամերիկայի Յունական Հիմնարկը Հոկտեմբեր 10ին հրատարակեց հաղորդագրութիւն մը, նշելով, որ «Թուրքիա իրաքի եւ Միջին Արեւելքի 400 տարուան գաղութատէջը եղած է։ Այս օրերուն թրքական ուժերու իրաք տեղադրումը կը նմանի գերմանական ուժեր Լեհաստան կամ Իսրայէլ տեղադրելուն, կամ՝ ճափոնական ուժեր Մանչուրիա կամ Քորէա զրկելուն։»

Հիմնարկի հաղորդագրութիւնը շեշտեց. «Թրքական կառավարութիւնը, որ կ'ուրանայ Հայկական Յեղասպանութիւնը, կը շարունակէ կիպոսի բռնադատումը, կ'ստանալիս իր քերտը քաղաքացիներու մարդկային իրաւունքները եւ կը սահմանափակէ իր քրիստոնեայ հպատակներու իրաւունքները եւ առհասարակ մարդկային իրաւունք տեսանկիւնէ աշխարհի ամենավատ վիճակացոյցը ունեցող երկիրներէն է, ի վիճակի չէ իրաքի ժողովուրդին համար իրեն ժողովրդավարութեան սիպար ներկայանալուն։»

21 Հոկտեմբերին, ԱՀԴՅԸ Ամերիկայի մէջ գործող յունական եւ քրտական բազմաթիւ կազմակերպութիւններու հետ միասնաբար նամակ մը յղեց նախագահ Ճորճ Պուշի, 12 կտեբրու մէջ հիմնադրելով այն կեցանածքը, թէ ինչն՝ Ամերիկա պէտք չէ զօրակցի թրքական ուժերու իրաք տեղադրումին։

ԹՈՒՐԲԻԱՅ ՆԱԽԱԳԱՀԸ ԿՐ ՔՆՆԱԴԱՏՈՒԻ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԵՐՈՒ ԼԱԶԱԿԱՌՈՐ ԿԻՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ԶՀՐԱԻՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ

Լազակի հարցը դարձեալ լուսարձակի տակ է թուրքիայի մէջ, ուր մամուլը խստօրէն քննադատած է նախագահ Ահմէթ Նեմետի Սեզէրը, որովհետեւ ան որոշած է յառաջիկայ Զորքերի, 29 Հոկտեմբերին կայանալիք թուրքիայի ազգային օրուան առիթով կազմակերպուած ընդունելութեան հրաւիրել միայն այն երեսփոխաններուն կիները, որոնք լազակ չեն հազնիր։

«Միլլիէթ» թերթը գրած է, թէ նոյնիսկ պետական հարուածներէ ետք իշխանութեանց գլուխ անցած դեկտեմբերը նման խիստ միջոցառումներու չէին դիմած, երազակացնելով, որ՝ «այս խորականութիւնը շատ գէշ է»։

«Ենի Շաֆաք» թերթը իր կարգին նշեց, թէ Սեզէրի այս կեցուածքը ցոյց կու տայ, որ նախագահը «երկրորդ կարգի քաղաքացի» կը համարէ կիները։



Ստգիր

ԱԶՐՊԷՅՅԱՆԻ ՄԷՉ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽԱՐԻՍԻ

Միացեալ Նահանգներու օդուժի հրամանատար եւ Եւրոպայի մէջ ամերիկեան զօրքերու փոխ հրամանատար գոր. Չաք Ուոլ ամերիկեան թերթի մը հետ հարցազրոյցի մը ընթացքին անդրադարձած է Միացեալ Նահանգներու ապագայ ռազմական խարիսխներուն։ Ըստ «Ազատ Արցախ» օրաթերթին, Ուոլի տուած է այն երկիրներուն անունները, ուր Ուաշինկթըն կրնայ խարիսխներ հաստատել։ Այդ երկիրներն են՝ Ազրպէյճան, Ուանտա եւ Սանթոմէ կղզին։ Ուոլի զիտել տուած է, թէ ամերիկացի զինուորներու ապագայ հարցերէն մէջ կը Ազրպէյճանի մէջ նոր խողովակաշարի մը վերահսկողութեան եւ կայունութեան ապահովման առաջնութիւն ունի Եւրոպական ցամաքամասին մէջ, սակայն Հարաւային Կովկասը եւ Եւրոպայի մէջ մասն է»։

Ազրպէյճանի Միլի Մեծիսի պատգամաւոր, ռազմական փորձագէտ գոր. Վլաստիմիր Տիմոնչենկօն շտաբ է, որ զգալի տարբերութիւն կայ «խարիսխ» եւ «խողովակաշարի պաշտպանութիւն» եզրերուն միջեւ։ «Անոնք տարբեր բաներ են. ռազմական խարիսխը իր մէջ կ'ընդգրկէ հսկայական ենթակառուցողականներ, պահեստներ, անձնակազմ, արհեստագիտութիւն եւ այլն։ Այսօր Ազրպէյճանի առջեւ կանգնած չէ օտար ռազմական խարիսխներու տեղակայման հարցը», ըսած է ան եւ՝ շարունակած. «Ինչ կը վերաբերի այդ խարիսխներուն, անոնք կրնան օգտագործուիլ խողովակաշարի պաշտպանութեան համար եւ այդ մէկը չի հակասեր մեր շահերին։ Իսկ թէ՛ ամերիկացիները իրենց վրայ վերցնեն այդ խմբաւորութեան ֆինանսաւորումը այդ մէկը մեզի համար աւելի ձեռնտու կ'ըլլայ։ Այս պարագային մենք ոչինչ կը կորսնցնենք եւ պէտք է նոյնիսկ շնորհակալութիւն յայտնենք Ամերիկային եւ ՕԹԱՆին»։

ԹՈՒՐԲԻԱ - ՎՐԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊԵՏՄԱՆ ՔԱՅԼԵՐ

Թուրքիոյ ցամաքային ուժերու հրամանատար Այթաք Եւլմազը վերջերս քննադատեց Վրաստան, ուր բանակցութիւններ ունեցած վրացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ, յատկապէս երկու երկիրներու ռազմական գործակցութեան շուրջ։ Թուրք զինուորական Վրաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Թեմալի չէր քննարկեց ռազմաարհեստագիտական համագործակցութեան առնչուող խնդիրներ։ Արժարձուած է թուրքիոյ պաշտպանութեան նախարարութեան կողմէ վրացական բանակին զարգացման համար դրամաշնորհի մը յատկացման կարելիութիւնը։

Վերջին տարիներուն թուրքիա ընդհանուր առումը տրամադրած է 25 միլիոն տոյլար կողմէ մը, որ մօտաւորապէս հաւասար է Վրաստանի այս տարուան պաշտպանողական ծախսերուն, որ ընդհանրապէս օգտագործուած է վազիանիի ուսուսակման խարիսխներուն, իր ընդհանրապէս օգտակար ռազմական օգնականի արդիականացման, վրացի ռազմագէտներու պատրաստութեան նպատակներով։ Թուրքիա նաեւ Վրաստանին նուիրած է քանի մը սահմանափակ ռազմական։

ԿԻՆԵՐՈՒ ԻՐԱՌՈՒՆՔՆԵՐԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՈՏՆԱԿՈՒՄՈՒԹԻՒԼ ԹՈՒՐԲԻԱՅ ՄԷՉ

Յունաստանի մէջ լոյս տեսած «Մարի Բլէր» շաբաթաթերթը յատուկ յօդուածով մը վերջերս նկարագրած է թուրքիոյ կանանց հանդէպ կատարուած հալածանքներն ու չարաբարքները։ Թողուածագիրը նշած է, թէ այս կացութեան ցայտուն օրինակներէն մէկը փաստաբան էրէն Քեթիլին է, որ բազմիցս եւ հետեւողական ձեռքով հետապնդուած է եւ սպանուիլներ ստացած։

Դժբախտաբար վերջերս անոր փաստաբանական իրաւասութիւններն ալ խնդրոյ առարկայ դարձած էին, նկատի ունենալով, որ Պոլսոյ Փաստաբաններու Համադաշնակցութիւնը մուլթ պատճառներով մեծած էր ընդունելի էրէն Քեթիլին վկայեալ փաստաբան։

Քեթիլին նկատի առնուած էր իրենեւ հաւաքակիչ

եւ բանտարկուած էր։ Ոստիկաններ քանիցս զինք փորձած էին բռնաբարել։

Մաքթեյլի կը յիշեցնէ, թէ մարդկային իրաւանց պաշտպան «Էմինըթի Ինթըրնէշնըլ» կազմակերպութեան մէկ յանձնարարութեամբ ահագանգ հնչեցուցած է լուսարձակի տակ առած է թուրքիոյ մէջ կիններու հանդէպ կատարուած չարաբարքներն ու բռնաբարութիւնները։

«Բռնաբարութեան եւ չարաբարութեան զոհերը կ'ուրացուին թուրքիոյ մէջ» խորագրեալ գրութեամբ մը, յանձնարարութեամբ յանձնարարութեան կողմէ փոխանցէր, թէ կազմակերպութիւնը պատրաստ փաստաթուղթեր ունի, որոնց մէջ կը նկարագրուի, թէ ոստիկանատուները եւ բանտերու մէջ կիններ եւ աղջիկներ կը բռնաբարուին։ Անոնց համար

դժուար է բողոքել, յանցարար պատասխանատուներուն դատապարտումը եւ վերջապէս արդարութեան հասնիլը։

«Էմինըթի Ինթըրնէշնըլ» կազմակերպութեան համար դժուար է որեւէ յառաջխաղացք արձակելու եւ պաշտպանել կիններու իրաւունքները, որովհետեւ անոնց պաշտպան փաստաբաններ ալ ճնշումի տակ են եւ իրենց կարգին կը ստանան սպանուիլներ։

Ահաւասիկ փաստ մը եւս, որ բանտերէ ներս, դաժան եւ բիրտ միջոցներով շարժարանք ու տանջանք կը շարունակուի կերպով թուրքիոյ փաստաթուղթեր ունի, որոնց մէջ կը նկարագրուի, թէ ոստիկանատուները եւ բանտերու մէջ կիններ եւ աղջիկներ կը բռնաբարուին։ Անոնց համար

ԵՐՈՒՍՏՐՈՐՈՒՄԻ ՂԵԱԿԱՌԻ ՄԸ ԸՆՏԱՁԱՅՆ

ԹՈՒՐԲԻԱ ՊԵՏՔ ԶԷ ԵՐՈՒՍՏՐՈՐՈՒՄԻ ՄԵՌՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՅԻՆ ՆՈՅՆԻՍԿ ԵԹԵ ԱՆՈՐ ԶԱՓԱՆԻՇՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Պոլսոյ «Մարմար» օրաթերթը վերջերս հաղորդեց, թէ Եւրոպական Խորհրդարանին մէջ քրիստոնեայ ժողովրդավար իմպերալի նախագահ զեմանացի Հանս Կէրթ Փոթէրինկ «Չաման» թերթին հետ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին ըսած է, որ թուրքիա չի կրնար Եւրոմիութեան անդամակցիլ, նոյնիսկ թէ լրիւ յարգէ Գոփենհայնի չափանիշները։

Այս խմբակը մեծ թիւով երեսփոխաններ ունի Եւրոխորհրդարանին մէջ, իսկ անոնց ղեկավարին կարծիքը որոշ կշիռ մը ունի։

Փոթէրինկ քանի մը առիթներով կրկնած է, թէ ինք եւ իր կուսակցութիւնը հակաթուրք չեն, ընդհակառակը, թուրքերը կը սիրեն եւ թէ կուսակցութիւնը կողմնակից եղած է թուրքիոյ հետ մաքսային միութեան համաձայնութիւնը ստորագրելու, սակայն Եւրոմիութեան անդամակցութիւնը տարբեր բան է։

«Շատ բարդ հարցեր կան։ Կրօնք չէ, որ արգելք է թուրքիոյ անդամակցութեան, այլ՝ մշակոյթն ու բարքերը։ Ոչ մէկը կրնայ պնդել, թէ Անատոլիոյ գիւղացիին կը նմանի Գերմանիոյ կամ Ֆրանսայի գիւղացիին։ Կիններու դիրքը ընկերութեան մէջ, եւ շարք մը այլ հարցեր պատեր կը բարձրացնեն Եւրոպական Միութեան ու թուրքիոյ միջեւ։ Եթէ թուրքիա անդամակցի, Եւրոպական Միութեան սահմանները պիտի երկարին մինչեւ Սուրիա կամ Իրան, ինչ որ ունի իր անպատեհութիւնները», նշած է ան։

Փոթէրինկի կարծիքով ընդհանրապէս չափազանցուած է թուրքիոյ ռազմավարական կարեւորութիւնը։ «Զեմ ըսեր, որ թուրքիա Մայլթան մըն է, բայց Մայլթան այ ռազմավարական կարեւորութիւն ունեցող երկիր է», յայտնած է Փոթէրինկ։

Անոր կարծիքով, թուրքիա պէտք չէ անդամակցի, այլ պարզապէս պէտք չէ ընդունուի իրեն Եւրոպական Միութեան գործընկեր։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԲԻԹԱՆԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄ - ԸՆԿԵՐՈՒԹԻՆՆԵՐ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐ

Արեւմտեան Փոքր Ասիոյ՝ Բիւթանիոյ մէջ հայկական բնակավայրերու կազմաւորման եւ հայ կեանքի կազմակերպման անդրադարձած ենք նախապէս՝ հասնելով մինչեւ Ժ. դարու վերջաւորութիւնը: Յետագայ ակնարկով մը նշենք, որ հայկական տարբեր գաւառներէ գաղթականներ, տարբեր ժամանակներու, իսկ աւելի զանգուածային կերպով՝ յատկապէս Ժ. դարու վերջաւորութիւնէն սկսեալ, պատերազմներու, ջարդերու ու հալածանքներու պատճառով գաղթեցին դէպի արեւմուտք՝ ապահով վայրեր եւ անոնցմէ շատեր Բիւթանիոյ շրջանին մէջ՝ Իզմիթ, Իզնիկ եւ այլ քաղաքներու շուրջ բնակութիւն հաստատեցին, գիւղեր կառուցեցին եւ մասամբ հայկական դիմագիծ տուին Պոլսոյ մօտակայ այս երկրամասին: Ժ. դարուն եւ այնուհետեւ ալ նոր գիւղեր կազմաւորուեցան:



ԲԻԹԱՆԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄ

Օսմանեան սուլթան Ահմէտ Գ. գահ բարձրացաւ 1703ին: Շուտով Քարլ Ժ. Թագաւորին հետ, որ քաղաքական կեանք կ'ապրէր իր պալատին մէջ, ան 1711ին Ռուսիոյ դէմ պատերազմի ձեռնարկեց, որ տեւեց մինչեւ 1713: 1715ին Մորէան գրաւեց վենետիկցիներէն, բայց երբ Աւստրիա մտաւ պատերազմին մէջ, օսմանցիք պաշտպանողականի անցան եւ 1717ին կորսնցու-

անդրադարձը ունեցան Բիւթանիոյ վրայ, մասնաւոր երբ Փաթրոնա իւրիւր գլխաւորութեամբ 1730ին ապստամբութեամբ մը տապալեցաւ սուլթան Ահմէտ Գ. եւ գահ բարձրացաւ գաւազը՝ Մահմուտ Ա.: Հագիւ գահ բարձրացած՝ ան Պարսկաստանի, Աւստրիոյ եւ Ռուսիոյ դէմ պատերազմներ մղեց. Պարսկաստանի հետ պատերազմը աւարտեցաւ 1736ի Պոլսոյ դաշինքով, իսկ Աւստրիոյ եւ Ռուսիոյ դէմ պատերազմը Պելկրատի 1739ի դաշինքով:

Բիւթանիոյ հայկական գիւղերը, հակառակ բոլոր վերիվայրումներուն, շարունակեցին զարգանալ ու բարգաւաճիլ. կառուցուեցան եկեղեցիներ, աղբիւրներ եւ այլն. յիշենք Եայթ Եթէի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին, կառուցուած՝ 1734ին, Թամլիք (Տամլիք) գիւղին Պապուկին աղբիւրը, կառուցուած՝ նոյնպէս 1734ին, Սապանձայի եկեղեցին կառուցուած՝ 1758ին, եւ այլն:

Սիմէոն Երեւանցի կաթողիկոս «Ջամբ»-ին մէջ Բիւթանիոյ հայութեան մասին խօսելով՝ կ'ըսէ.

«Ի յերկրին Արեւմտեան, որք զոն ընդ իշխանութեամբ Օսմանցւոց: Առաջին՝ մեծ մայրաքաղաքն Կոստանդուպոլիս: Ընդ որով եմ եւ ներքոյ գրեալը.

«Օվանըղ, Ղլիւն գիւղ, Ասլան-բէկ, Ղուրբ-պէլաք, Օրբաբիւղ, Ատաբազար, Արմաշ, Խոսկալ, Ալմալու, Ֆեբրիգու, Թամլիք, Նոր Դիւղ, Ֆնտիլու, Սապանձա եւ Իզնիկիտ քաղաքը»:

Կաթողիկոսը այնուհետեւ կ'ըսէ, որ փոխանակ մէկ նուիրակ ուղարկելու հոն, որ հիւզ-վեց տարուան մէջ կրնար աւարտել պողոտահաւաքութեան գործը, որոշած է երկու նուիրակ ուղարկել, որոնք երեք տարուան մէջ պիտի կատարեն իրենց շրջանը:

Ջաբրիա պատրիարք Կազգուանցի Արմաշի վանահայր եւ առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Ղափանցիի 1780ական տարիներուն ուղարկած կոնդակին մէջ յիշատակութիւն պահած է Բիւթանիոյ հայութեան մասին: Ուսքը առաջնորդին ուղղելով՝ պատրիարքը կ'ըսէ. «Ի վերայ Արմաշու Չարխափան Սուրբ Աստուածածնայ Վանուց թեմի եւ վիճակի, եւ Իզնիկիտու, Ատաբազարու, Ֆեբրիգիւղու, Թամլիքու, Նոր Գեղու, Ֆրնտըլիւլու, Ալմալուի, Խոսկալու, Տաղ Գեղու, Արալու Պելիւ...»: Պատրիարքը կը յիշէ թեմին բազմատասնեակ գիւղերը՝ հրահանգելով, որ պտուղի, կնուճի, հարսանիքի, հոգեբաժնի, կտակներու, մատաղներու, պատկերի օծման, թաղման, քահանայի օրհնութեան, գիւշերամիսի եւ քառասնեաց բոլոր տուրքերը միմիայն առաջնորդին կամ անոր փոխանորդներուն տրուին, իսկ առաջնորդն ալ իր կարգին միջամուխ չըլլայ քաղաքային գործերուն, այլ միայն եկեղեցական եւ հոգեւորական իր ծառայութեան մէջ մնայ:

ԸՆԿԵՐՈՒԹԻՆՆԵՐ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐ

Օսմանեան կայսրութեան իրերայնորդ վերիվայրումները՝ Մահմուտ Ա., Օսման Գ., Մուսթաֆա Գ., Ապտիւլ Համիտ Ա., Սելիմ Գ. եւ Մուսթաֆա Գ. սուլթաններու օրերուն պատճառ դարձան պատերազմներու եւ աւերածութիւններու, եւ արդէն հայկական գաւառներուն մէջ ժողովուրդը դժուար պայմաններ կը դիմագրաւէր: Իսկ Բիւթանիոյ հայութիւնը նոր գաղթականութիւններու եւ բնական աճի բերուածով բազմանալով՝ սկսաւ տարածուիլ շրջակայները. ներմուծուեցան արհեստներ, որոնք նպաստեցին շրջանի բարգաւաճման եւ նոր գիւղերու կազմաւորման:

Այս բոլորը ժամանակաշրջանին, միայն Ժ. դարու վերջաւորութեան, Չակիր Հասանի արշաւանքին ժամանակ Բիւթանիոյ հայութիւնը վնասներու ենթարկուեցաւ, իսկ Արմաշի վանքին բոլոր գրադիրները ոչնչացուեցան:

Պայրագտար Մուսթաֆա փաշայի գլխաւորութեամբ 28 Յուլիս 1808ին շրջայագրածուած յեղաշրջումով տապալեցաւ սուլթան Մուսթաֆա Գ. եւ գահ բարձրացաւ եղբայրը՝ Մահմուտ Բ.: Տարի մը չանցած ենիչերիներ ապստամբեցան եւ սպաննեցին Պայրագտարը: 1812ին Պուրլէշի ղաշինքով աւարտեցաւ ռուս-թրքական տարիներ տեւած պատերազմը: Իրրեւ հայ կեանքի կարեւոր կեդրոն՝ Բիւ-

թանիոյ եւ յատկապէս Արմաշի վանքին կարեւորութիւնը բարձրացաւ, երբ 1810ին Պրուսայի առաջնորդ կեսարացի Պօղոս արքեպիսկոպոս Գարագոշ Արմաշի առաջնորդ նշանակուեցաւ: Ան միացուց Պրուսայի եւ Արմաշի վիճակները եւ վերաշինեց ու զարգացուց վանքը. վախճանեցաւ 1825ին:


Արմաշի միաբան Երեմ վարդապետ այս ժամանակաշրջանին Պարտիզակի մէջ հիմնեց Թորգոմեան ընկերութիւնը, որ հաստատուեցաւ արքունի գործակալ Ստեփան Չայեանի շրջանի այցելութեան ժամանակ: Նորաստեղծ ընկերութեան Ստեփան Չայեան նուիրեց հինգ հարիւր դահեկան, Առաքել Տատեան՝ հազար դահեկան, իսկ Ալեքսանդր Արմաշի վիճակները եւ վերաշինեց ու զարգացուց վանքը. վախճանեցաւ 1825ին:

Թորգոմեան ընկերութեան օրինակով Նիկոմիդիոյ մէջ հիմնուեցաւ Լուսաւորչեան ընկերութիւնը, Ատաբազարի մէջ՝ Արամեան ընկերութիւնը, եւ աւելի ուշ՝ 1849ին Սրբոց Ղեւոնդեանց ընկերութիւնը Արսլանպէկի մէջ:

Նորաստեղծ ընկերութիւնները զարկ տուին կրթութեան եւ մշակոյթի տարածման եւ անոնց ջանքերով բացուեցան դպրոցներ: Պարտիզակի մէջ 1820ին բացուեցաւ «Ներսէս Շուշանեան» երկսեռ վարժարանը, իսկ Նիկոմիդիոյ մէջ՝ «Լուսաւորչեան-Գալիանեան» երկսեռ վարժարանը: Ատաբազարի Սուրբ Լուսաւորիչ թաղին մէջ 1830ին բացուեցաւ «Ռուբինեան - Հոփսիսի-եանց» վարժարանը:

Նոյն ժամանակ, 1830ին Սիմ - Հաճի գիւղէն տիրացու Յովհաննէս Քէշիշեան Արսլանպէկ հաստատուեցաւ եւ վարժապետութեան պաշտօն ստանձնեց՝ առանձին լծուելով նոր սերունդի կրթութեան աշխատանքին, որովհետեւ գիւղը այդ ժամանակ վարժարան չուներ: Ան մինչեւ 1842 մնաց Արսլանպէկ՝ իրրեւ կրթական մշակ եւ յետոյ քահանայ օծուեցաւ:

ՀԱՅ ՆՈՐ ԳԱՂԱԿԱՆՆԵՐ ԲԻԹԱՆԻՈՅ ՄԵՋ ԵՒ ՆՈՐ ԳԻՒԴԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ



Երկրին յարաբերաբար խաղաղ գոյակիճակը խանդարուեցաւ Պալեստինեան մէջ ծայր առած շարժումներուն պատճառով. սերպեր ինքնավարութիւն ստացան, որմէ ետք ծայր առաւ յունական ազատագրական պայքարը: Սուլթան Մահմուտ Բ. 1826ին լուծարեց ենթարկեցիկներու բանակը եւ անոնցմէ հազարաւորներ սպաննել տուաւ: 1828 - 1829ի ռուս-թրքական պատերազմին օսմանեան բանակը ծանր պարտութիւն կրեց եւ 1830ին ճանցաւ Յունաստանի անկախութիւնը:

Եգիպտոսի կառավարիչ Մուհամմէտ Ալիի բանակը, զաւկին՝ Իպրահիմ փաշայի հրամանատարութեան տակ ներխուժեց Սուրիա, գրաւեց Դամասկոսը, Հալէպը եւ մտաւ Անատոլի՝ սպաննելով Պոլսոյ, մինչեւ որ օսմանեան բանակը 24 Յունիս 1839ին ջախջախեց եգիպտական բանակը:

Այս բոլորը պատերազմները եւ վերիվայրումները իրենց անդրադարձը ունեցան հայ կեանքին վրայ եւ հայկական գաւառներէն ընտանիքներ գաղթեցին ապահով վայրեր եւ անոնցմէ ոմանք հասան Բիւթանիա:

Պիլէճիկի Կէօք Տաղ գիւղէն եօթը ընտանիքներ, որոնք գոյութեան դժուար պայմաններ կը դիմագրաւէին եւ շերամապահութեան համար մէկ տարի Նիկիոյ կողմերը աշխատելու կ'եր-



թային, տեսնելով շրջանին բարեբեր հողերը՝ ձգեցին իրենց տունն ու տեղը եւ հասան Նիկիոյ լիճին ափերը, Նիկիա (Իզնիկ) քաղաքէն արեւ-



մուտք, ուր ճահճային հրուանդանի մը վրայ 6 Յունուար 1817ին հիմնեցին Նոր Գիւղը:

Նիկիոյ տեղակալ հաճի Մեհմէտ աղա փորձեց բռնութեամբ արգիլել անոնց բնակութիւնը, բայց Ֆերհատ բէկ պաշտպանեց զանոնք եւ միջոցներ տրամադրեց, որ հայերը բնակարաններ կառուցեն եւ պարտէզներ ու այգիներ մշակեն:


Սակայն գաղթականները փոքրաթիւ ըլլալով՝ չաջողեցան եկեղեցի կառուցելու արտօնութիւն ձեռք ձգել, հետեւաբար Սահակ Չլպախեանի տան մօտ արթթատեղի մը շինեցին, որուն բացումը կատարուեցաւ 13 Մարտ 1819ին:

Յաջորդող տարիներուն Պրուսայէն եւ Նիկոմիդիոյ շրջակայ գիւղերէն գացին հաստատուեցան հոն եւ ստուարացուցին Նոր Գիւղի բնակչութիւնը: Այնուհետեւ սէօլթօզի երկու եղբայրներու՝ Մահմուտ Թորոս եւ Մահմուտ Յովհաննէս Միքայէլեաններուն նուիրատուութեամբ կառուցուեցաւ եկեղեցի, գոր կոչեցին Սուրբ Լուսաւորիչ, եւ որուն բացումը կատարուեցաւ 26 Յուլիս 1836ին: Նշենք, որ Միքայէլեանները Մէօլթօզի մեծ եւ համբաւաւոր ընտանիքներէն էին եւ անոնց նահապետը իշխանապետ կը կոչուէր:


Մահմուտ Յովհաննէս Միքայէլեան տեսնելով, որ գիւղը ըմպելի ջուրի պակասէ կը տառապի, 13 Հոկտեմբեր 1847ին իր ծախսով ջուր բերել տուաւ:

Սակայն Նոր Գիւղի կլիման վատաոզող էր. շրջակայ ճահճները գարշահոտութիւն կը բուրձին, իսկ Նիկիոյ լիճին ջուրերը բարձրանալով յաճախ կ'ողողէին ու կը փճացնէին արտերն ու պարտէզները: Յետոյ, երբ ջուրերը քաշուէին, ցեխն ու ճախճախտտներ կ'ապականէին ամբողջ մթնոլորտը. երեւան կ'ելլէին անթիւ ու անհամար թռչուններ ու մոծակներ: Իսկ լայնատարած ծանծաղուտներն ու եղեգնուտները գորտերու բոյն ըլլալով՝ ամբողջ մթնոլորտը անոնց կռկոցներով լեցուն էր:

Սակայն գաւառներէն Ժ. դարուն սկիզբը Բիւթանիա գաղթողներէն յիշենք նաեւ մարգուանցի ընտանիքները: Արդարեւ, 1830ին Մարգուանի Սիմ Հաճի գիւղէն ջուրհակ Ստեփան եւ



տիրացու Յովհաննէս Քէշիշեան իրենց ընտանիքներով եւ Տէր Կարապետեան գերդաստանը գաղթելով Արսլանպէկի մէջ բնակութիւն հաստատեցին: Անոնց սերունդները բազմադար տոհմեր կազմեցին. ամէնէն աւելի հեղինակաւոր դարձան մանաւանդ Տէր Կարապետեանները: Արսլանպէկի մէջ գտնուող անոնց նահապետ Մկրտիչ Տէր Կարապետեանի դամբարանին վրայ արձանագրուած էր. «Այր աստուածավախ, բարուր ծանրաթոճ, եկած է այս իւր ծնողքից հետ Մարգուանի Սիմ - Հաճի գիւղէն 1830ին»: Անոր սերունդէն Կարապետ Տէր Կարապետեան հետագային մետաքսի գործարան բացաւ Արսլանպէկի մէջ: Իսկ ջուրհակ Ստեփանի սերունդէն կազմաւորուեցաւ Ստեփանեան գերդաստանը:



ցին Պելկրատը: Փասարովիչի 1718ի դաշինքով Թուրքիա կորսնցուց Հունագարիան եւ Սերպիոյ մէկ մասը:

Այս ժամանակաշրջանին, մօտաւորապէս 1710ին Բաբերդէն, Անկիւրայէն, Կարինէն եւ այլ վայրերէ հայեր գացին բնակութիւն հաստատեցին Նիկիոմիդիոյ լիճին հարաւ-արեւմտեան կողմը, անտառախիտ լեռնաշղթայի մը ստորոտը գտնուող եւ պտղատու ծառաստաններով շրջապատուած Սապանձա գիւղին մէջ: Սապանձա Նիկիոմիդիոյ լիճին հիւսնակները՝ Սոփոն Լիմնոնցի Նիկիոմիդիոյ լիճին հարաւ-արեւմտեան կողմը բնակէին թուրքեր, յոյներ ու վրացիներ, եւ անոնց կողքին գացին տեղաւորուեցան գաղթականները: 1758ին անոնք եկեղեցի կառուցեցին:

Արմաշի վանքի առաջնորդ Նիկիոպոլսու եպիսկոպոս Աստուածարան իր կարգին շինարարական լայնածաւալ աշխատանք տարաւ. 1720ին անոր ջանքերով նորոգուեցաւ Արմաշի վանքին Չարխափան տաճարը: Նոյն ժամանակաշրջանի յիշատակարաններէն նշենք Մեծ Նոր գիւղի Սուրբ Կարապետ եկեղեցւոյ խաչքարը եւ Քերամի մէթի եկեղեցւոյ արձանագրութիւնը, որոնք 1727 թուականը կը կրեն, իսկ Տէօնկէլի եկեղեցւոյ խաչքարը կը կրէ 1727 թուականը: Այս ժամանակ ընդօրինակուած են ձեռագիր Աւետարաններ եւ ժամագիրքեր, որոնցմէ յիշենք Քարցի գիւղին ամէնէն հին ժամագիրքը, ընդօրինակուած՝ 1706ին:

Քաղաքական վերիվայրումները եւ պարբերաբար կրկնուող խառնակութիւնները իրենց



ԱՆԹԻԼԻԱՍԻ ԺՈՂՈՎԻՆ ...

Շարունակում՝ 5րդ էջէն

2.- Ինչ կը վերաբերի ի նպաստ Հայաստանի, Ղարաբաղի կամ ազգային պահանջատիրութեան տեղի ունեցող նախաձեռնութիւններուն կամ համազգային ձեռնարկներուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մասնակցութեան, հետեւեալ յիշեցումները եւ ճշդումները կատարուեցան։-

ա.- Իրբեւ սկզբունքային մտեցում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը գործնապէս մասնակից պէտք է դառնայ Հայաստանի, Ղարաբաղի, Սփիւռքի հայութեան ու ազգային պահանջատիրութեան հզօրացման նպատակով բոլոր նախաձեռնութիւններուն եւ համազգային բոլոր ձեռնարկներուն։ Այս է մեր Ս. Աթոռին ազգային-եկեղեցական քաղաքականութիւնը։

բ.- Նման ձեռնարկներուն մեր Ս. Աթոռին մասնակցութեան մակարդակը, չափը, տարողութիւնն ու ձեւը կը ճշդուի տուեալ նախաձեռնութեան յարաբերաբար։

գ.- Նման ձեռնարկներուն մասնակցութեան պարագային նախապայման է, որ լիիրաւ կերպով յարգուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեղը մեր եկեղեցւոյ Նուիրապետական կառոյցին մէջ։

8.- Կարողիկոսարանի անդամական կացութիւն
Լսելէ ետք կաթողիկոսարանի անդամական կացութեան մասին վեհափառին կատարած շարք մը մատնանշումները, ինչպէս նաեւ՝ կաթողիկոսարանի անդամական կացութեամբ մօտէն զբաղող պատասխանատուներու գեկոյցը, ժողովը նկատեց, որ կաթողիկոսարանին ընթացիկ պիտեմէն, որ տարեկան մէկ միլիոն երկու հարիւր հազար տոլարի գումար կը հաշուէ, անկայուն է եւ կը հաւասարակշռուի առաւելաբար նուիրատուութիւններէ գոյացած գումարներով։ Անկախ ընթացիկ պիտեմէն, նաեւ կաթողիկոսարանը հրամայական անհարձեղութիւն ունի այլ եկամուտներու իր զանազան ծրագիրները, ձեռնարկները ու միջազգային յարաբերութիւնները արդիւնաշատ կերպով իրագործելու համար։ Հետեւաբար թելադրուեցաւ, որ թեմերու աթոռատուրները զգալիօրէն բարձրանան, թեմեր եւ ազգայիններ կաթողիկոսարանի յատուկ ծրագիրներուն օժանդակեն, ինչպէս նաեւ յատուկ կտակներու ու հիմնադրամներու ճամբով ամբապնդեն կաթողիկոսարանի անդամական կացութիւնը։

Ժողովը նաեւ անդրադարձաւ այլ հարցերու՝ միշտ կաթողիկոսարան-թեմ գործակցութեան եւ կաթողիկոսութեան ընդհանուր գործունէութեան ծիրին մէջ։

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առնչական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը։

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5577

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|---|--|
| 1. Խոնավարար - Արական օտար անուն։ | 1. Պաճուռակապտանք - Ուղղուկ։ |
| 2. Մեղմ ալիք - Դադրիլ։ | 2. Վրաստանի գետերէն - Ջրասէր հաւ։ |
| 3. Փոքր - Յիմար, պանդոյր։ | 3. Սպանդանոց - Չուարթ։ |
| 4. Ազատորբար - Հայոց Դ. ամիր։ | 4. Կռիւ - Ս. Գրային մարգարէ։ |
| 5. Սիջոց, դարման - Ջայնանիչ - Քաղցր։ | 5. Ազամանդ - Մերձաւոր Արեւելքի պատմական երկիրներէն։ |
| 6. Իրաքեան լրատու գործակալութիւն - Յորենի խուրձ - Յուլցական ածական։ | 6. Անգոյ, երեւակայական։ |
| 7. Դուրսէն ապրանք բերել։ | 7. Հինտու կրակի աստուածը - Չաչ - Պարտականութիւն (հակ)։ |
| 8. Պղտոր գետի թանձր մրուր - Ժամանակի միաւոր։ | 8. Բազմութիւն - Օդ - Ջայնակից գիրք։ |
| 9. Հարաւային Ամերիկայի ոստաններէն։ | 9. Կեռիկ, ջուր կրելու աման - Կարմրամիս ձուկ։ |
| 10. Սերմնափակ - Միքայէլ Յովհաննիսեանի գրչանունը։ | 10. Թանձրակեղեկ պտուղ։ |
| 11. Մանր քար - Ո՛չ հում, ո՛չ եփած։ | 11. Ընդդէմութիւն - Իգական օտար անուն - Քարիւղի ընկերութիւն մը։ |

ԹԻՒ 5576

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	2	3	4	5	6	7	8	9	10
2	3	4	5	6	7	8	9	10	11
3	4	5	6	7	8	9	10	11	12
4	5	6	7	8	9	10	11	12	13
5	6	7	8	9	10	11	12	13	14
6	7	8	9	10	11	12	13	14	15
7	8	9	10	11	12	13	14	15	16
8	9	10	11	12	13	14	15	16	17
9	10	11	12	13	14	15	16	17	18
10	11	12	13	14	15	16	17	18	19

ար
94

bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէրոյթի սակարանից մէջ օտար դրամացիներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.
Սուրիական թղթակի 28,65 - 28,85 լ.ն.
Քուէյթեան տինար 5122,00 - 5147,00 լ.ն.
Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեանց տիրամ 410,75 - 412,75 լ.ն.
Քարաբեան դիալ 413,75 - 415,75 լ.ն.
Միւտական դիալ 402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան դիալ 3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ 220,00 - 230,00 լ.ն.
Անգլիական սթրլին 2547,00 - 2557,00 լ.ն.
Նիւիւորքիական ֆրանք 1133,00 - 1138,00 լ.ն.
Թրքական լիրա 99,25 - 99,75 լ.ն.
Կիպրական փաունտ 2990,00 - 3015,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն 13,75 - 13,85 լ.ն.
Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար 1142,00 - 1147,00 լ.ն.
Քանադական տոլար 1055,00 - 1060,00 լ.ն.
Աստրալիական տոլար 1760,00 - 1770,00 լ.ն.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 148,500 - 153,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 134,000 - 139,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի 123,500 - 128,500 լ.ն.
Մեքսիկական փէսոս 711,000 - 731,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 18,550,000 - 18,750,000 լ.ն.
Մէկ օսն ոսկի 385,00 - 385,50 \$
Մէկ օսն արծաթ 5,14 - 5,16 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրո 1.1665 - 1.1670
Քանադական տոլար 1.3160 - 1.3170
Ռուիցերիական ֆրանք 1.3293 - 1.3298
Ճափոնական եէն 108.55 - 108,60
Մէկ սթրլին 1.6900 - 1.6910

Մէկ տոլար 580 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
Գիւնի Ա. ճշդում Գիւնի Բ. ճշդում
Ա. կարգ 4,19 4,31
Բ. կարգ - -

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ)

Եթէ անգործ էք, գացեք հոն, ուր մտադրած էիք երթալ։ Ձեզ պիտի ընդունին սիրով։ Օրը ունի հետաքրքրական անկեղծներ ու շահաբեր գործեր։

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Օրը շատ բախտաբեր պիտի ըլլայ։ Պիտի յաջողիք կարեւոր իրագործում մը յայտնաբերել՝ զարմացնելով ձեր շրջապատը։ Սիրալիք եղէք ամէնուն հետ։

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Պիտի գտնէք միջոց մը՝ ձեր կեանքից մակարդակը բարելաւելու։ Ուրեմն այսօր կատարեցէք ձեր սրտին ուզածը։ Ունիք յաջող հանգիպումներ։

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ներդաշնակութիւն պիտի տիրէ ձեր ու ձեր կողակիցից կամ ընկերոջ միջեւ։ Ձեր երկուքից փափաքները միեւնոյն ձգտումն են կր բխի։ Օգտուեցէք առիթէն։

ԱՌԻՒԻ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Աշխատանքի մէջ պիտի ստեղծէք կայուն մթնոլորտ եւ հաստատուն գործակցութիւն։ Պաւստ։ Օրը պիտի ունենայ նաեւ նիւթական բարօրութիւն։

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Այսօր սերը ձեզ պիտի գտնէ, ուր որ ալ գտնուիք։ Ուրեմն պատրաստ եղէք զայն դիմաւորելու գրկաբաց։ Եղէք հանդիսակատար եւ հաշտ՝ բոլորին հետ։

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Այսօր ձեզի պիտի հաղորդեն ուրախ լուր մը՝ ձեզուցի մը կամ ամուսնութեան մը մասին։ Պատրաստեցէք ձեր նուրբ եւ մասնակցեցէք ուրախութեան։

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Պիտի գտնէք ձեզուցի բաներ միտքաբերելու համար բարեկամ մը, որ շուտապէս վիճակ մը ունի։ Օգտակար ըլլալ բարեկամի մը, պիտի փաստէ ձեր պարկեշտութիւնը։

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Եթէ ընկերովի կ'ապրիք նոյն տեղը, ձեր միջեւ բաժնուեցէք ձեր կատարելիք պարտականութիւնը։ Մարդը մարդով կրնայ աւելի ուրախ ապրիլ, եթէ անկեղծ է։

ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Անձ մը պիտի գրաւէ ձեր ուշադրութիւնը, անկէ պիտի գայ հանելի անակցակա մը։ Գիտցէք, որ օրը բախտաբեր է։ Ուրեմն՝ գուարեացէք։

ԾՈՎԱԼՆՅՅ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Ոմանք պիտի փորձեն ձեր կարողութիւնը. պիտի յաջողիք այս փորձին մէջ, որ կայ ունի ձեր ապագային հետ։ Եղէք ինքնավստահ եւ գործունեայ։

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Բարեկամ մը ձեզի պիտի առաջարկէ նիւթական օգուտի մը, որպէսզի փրկուիք մտահոգութեան մը։ Ընդունեցէք այս առաջարկը անմիջապէս։ Օրը ունի նաեւ տարբեր հանելի անակցակցներ։

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՈՒ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ԼԵՌՆԱԼԻԲԱՆՆԻ ՓՈՔՐԻԿ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՆՈՂ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



«Մէն ժոյէֆ» համալսարանի պատմագիտութեան բաժանումն է արեւելեան գրադարանի կազմակերպութեամբ մինչեւ 30 Հոկտեմբեր Մէն ժոյէֆ եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ լուսակարչական հետաքրքրական ցուցահանդէս մը, որ կը կրէ «Փրօքի էքոլ տիւ Մոն-Լիպան» («Լեռնալիքեան փոքրիկ դպրոցները») խորագիրը։ Մեծաբան եւ աւելի քան վեց տասնամեակ ունեցող շուրթուրտուն լուսակարչական արտադրանքներ կը վաճարուին 20րդ դարու առաջին տասնամեակներուն Լեռնալիքեան մէջ տարածուած գիւղական շրջաններուն մէջ։

Յիսուսեան վարդապետ ժոյէֆ Տըլորի (1873 - 1944) ոսպնեակին պատկանող այս լուսակարչները յետադարձ ակնարկով մը կը վերաբեւոյնեն Տրուի-Քեսրուանի, ժիպէյի եւ Պարոնի շրջաններուն մէջ տարածուած գիւղական, յաճախ բացօթեայ դպրոցները։ Այս լուսակարչները հարապատ մէկ պատկերը կը փոխանցեն տուեալ ժամանակաշրջանին Լիբանանի մշակութային եւ ընկերատնտեսական իրավիճակին։

Անոնք յաճախ կը դեկավարուէին Միջին Արեւելք հասնող ֆրանսացի քարոզիչներուն կողմէ, որոնք իրենց կայքերը հաստատած էին Լեռնալիքեան արեւելեան գրադարանի լուսակարչներու բաժինին պատասխանաբար Լեռնալիքեան։

Նշենք, որ ցուցահանդէսին կ'ընկերանայ ստորագրութիւնը տուեալ ժամանակաշրջանի Լեռնալիքեան արեւելեան դպրոցներուն մասին գրքոյկի մը, զոր պատրաստած է համալսարանի արեւելեան գրադարանի լուսակարչներու բաժինին պատասխանաբար Լեռնալիքեան։

ԱՅՍՈՐ

- Նկարչական ցուցահանդէս՝ «Այօ», Մոնա Սա-
նահի գործերը, «Ջաման» ցուցասրահ, մինչեւ 1
Նոյեմբեր։

- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Պի-
Ռուք», «Կեօք» նիւմարի, մինչեւ 19 Նոյեմբեր։

- Նկարչական ցուցահանդէս՝ «Քալըր եւ ուր
մայնո», Ժուստին Սէյթալի գործերը, «Էսփաս Էս.
Տէ.» ցուցասրահ, մինչեւ 15 Նոյեմբեր։

- Նկարչական ցուցահանդէս՝ «Փոլեմ տը վիւ»,
Նապիլ Ղանուրի գործերը, «Ռոշան» ցուցասրահ,
մինչեւ 4 Նոյեմբեր։

- Ձեռնդրած արուեստի ցուցահանդէս՝ «Ըբրոս
Քանթիլընթ», Ժիւստին Մաքքի Պաշոյի գործերը,
«Յընել» ցուցասրահ, մինչեւ 23 Նոյեմբեր։

- Լուսակարչական ցուցահանդէս՝ «Փալեսթին
ուսանողներ», Ֆրանսական Մշակութային Կեդրոն,
մինչեւ 31 Հոկտեմբեր։

ՕՐԵՆԵՒՅՅ

ՉՈՐԵՔԸԱՔԹԻ,
29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ
ԱՆՁՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՅԵՐԵՎՊՈՒՄ 27°C

ԳԻՇԵՐ՝ 22°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝
64%

ԱՉԳԱԿ

50 ՏԱՐԻ ԿՐԻՄԱՆ

29 Հոկտեմբեր 1953

«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԹ»Ը ՅՈՒՆԱՐԷՆ

Բանաստեղծ մտաւորի՝ Նիքոս Փափասի եւ Ռիթա Պոմի - Փափայի խմբագրութեամբ Աթէնքի մէջ Մայիսէն ի վեր ամէն շաբաթ կանոնաւոր կերպով պրակ առ պրակ լոյս կը տեսնէ «Բանաստեղծութեան համաշխարհային ծաղկաբաղը»։ 22րդ պրակին մէջ Մարիա Ե. Իրոնովիչի քարոզմանութեամբ հրատարակուած էր հատուած մը «Մասուեցի Դաւիթ»էն։ Այդ եւ յաջորդ պրակները նուիրուած էին բոլոր ազգերու ժողովրդական բանահիւսութեան։ Իսկ նոյն ծաղկաբաղի 24րդ պրակին մէջ հրատարակուած էին Դանիէլ Վարուժանի «Կարօտի նամակը», «Ականջներուն»ը եւ «Միջօրէն», առնուած՝ Ալեքիսի «Արմենական Մուսա»էն։ Քերականութեան կցուած էին Վարուժանի կեանքի նկատմամբ մասին բանական ընդարձակ ծանօթութիւններ։

ԱՅՍՈՐ՝ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

1952- Սահ՝ մաքեմաթիկոս փրոֆ. Յովհաննէս Նաւակատիկեանի։

ԻՍՐԱՅԷԼԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ ԿԸ ՀԱՐՑԱՔՆԵՒ ԿԵՆՏՐՈՆԸ՝ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԳԱՅԾԱԿՂՈՒԹԵԱՆ ՄԸ ԳԾՈՎ...



Իսրայելի վարչապետ Արիել Շարոնն այսօր հարցաքննության պիտի ենթարկվի Կենտրոնի փոխնախագահ Կոզմի՝ փոստալիստիկայի կառավարողների մը համար, որոնք կ'առնչուին իր երկու գաւակները: Կառավարողներն խորհրդատու եւ ընդհանուր դատախազ էլիաքիմ Ռոսլընը շեղանք կանաչ լոյս տուած է հարցաքննելու Շարոնը:

Հարցաքննիչները Շարոնի հարցումներ պիտի ուղղեն այն ամբաստանութիւններուն մասին, ըստ որոնց Շարոնը հարաւային փոխնախագահները օգտագործած է վերադարձնելու համար նուիրատուութիւններ, զորս ստացած էր Լիբանանի ղեկավարութեան համար մղած ընտրապայքարին: Յիշեալ նուիրատուութիւնները օրինակաբար նկատուած էին: Ոստիկանութիւնը պիտի ուզէ իմանալ, թէ ի՞նչ պայմաններով Շարոն ստացած է 1,5 միլիոնի փոխնախագահները:

Շարոնը ցարկ կարեւորութիւն չէր տուած ամբաստանութիւններուն, զանոնք ցեխաբաժակու՞մ եւ գրպարտութիւն որակելով:

(Ա.Յ.Փ.)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԿՈՉ ԿՈՒՂԴԵ ԵՒՐՈՊԱՅԻ՝ ՄԻԱՆԱԼՈՒ ԱՐԱՔԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Մ. Նահանգներու ներքին ապահովութեան պատասխանատու Թոմ Ռիճ Երէկ կոչ ուղղած է եւրոպական երկիրներուն, որ միանան ահաբեկչութեան դէմ ամերիկեան զիխարուրութեամբ պատերապմին՝ պայքարելու համար «ընդհանրական թշնամիի մը դէմ»:

Սպանիա այցելութեան մը առիթով, Ռիճ ըսած է, որ ահաբեկչութիւնը ընդհանրական սպառնալիք մըն է եւ ո՛չ շրջանային է: «Ընդհանրական թշնամի մը կարիքը ունի ընդհանրական հակադարձութեան մը»:

ԱՐԱՔԵԿՉՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԱՐԱՋԱՆԳԸ՝ Ի ԶՐՈՒՒ

Միւս կողմէ, Ռիաթի մէջ ամերիկացի պաշտօնատար մը երէկ ըսած է, թէ Մ. Նահանգներու Սէնտակաւս Արաբիա գործակցութիւնը մեծ համեմատութեամբ ընդարձակուած է՝ ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ, սակայն Ուաշինկթըն պիտի շարունակէ իր քաղաքացիները պաշտպանելու ահաբեկչական բնոյթի սպառնալիքներու գծով:

Երկուշաբթի օր, ամերիկեան արտաքին գործոց նախարարութիւնը դարձեալ պաշտպանուած էր իր քաղաքացիները Սէնտակաւս Արաբիա այցելելէ, հակառակ իրապարակաւ անոր գովասանքներուն՝ Ռիաթի հակաահաբեկչական քայլերուն գծով:

ԻՐԱՆԻ ՍԵՐՏՈՂԱԿԱՆ ԿԵՅՈՒՄԵՐ

Մինչ այդ, Իրան երէկ դարձեալ մերժողական կեցուածք ցուցաբերած է «Քալիտա» ցանցի անդամներ Ուաշինկթընի յանձնելու առաջարկին գծով, շեշտելով, որ կարգ մը անդամներ իրանեան ատեաններու մէջ պիտի դատուին:

Երկուշաբթի օր Մ. Նահանգներ յայտնած էին, թէ Իրան պէտք է յանձնէ իր մօտ արգելափակուած «Քալիտա»ի անդամները եւ ո՛չ թէ միայն անոնց ինքնութիւնը տեղեկացնէ ՄԱԿին:

Շաբաթ օր, իրանեան պետական մամուլը հաղորդած էր, որ Թեհրան ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին տուած է «Քալիտա»ի 78 անդամներու անուններ: Անոնք արդէն իրենց ծննդավայր երկիրներուն յանձնուած են, ըսած էր անիկա:

Թեհրան նաեւ տուած է 147 անուններ՝ անձերու, որոնք «Քալիտա»ի կամ թալեպան շարժումին անդամներն են եւ որոնք տակաւին արգելափակուած կը մնան:

ՌՈՒՄԻԱ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ Ո՛Չ ԹՇՆԱՄԻ, ՈՉ ԱԼ ԴԱՇՆԱԿԻՑ ԵՆ Կ ԸՍԷ ՍԵՐԳԷՅ ԻՎԱՆՈՎ

ՄՈՍԿՈՒԱ, 28 (Ա.Յ.Փ.)

Ռուսիան Մ. Նահանգներ ու չ'ընդունի ինչպէս անդամները, ոչ ալ դաշնակիցներ են, յայտնած է Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով հարցազրոյցի մը մէջ:

Հարցումի մը, թէ արդեօք Պաշտպանութեան օրէնքներով իրենց կարգապահութիւնները ներկայիս դաշնակից թշնամի են, նախարարը պատաս-

խանած է. «Ամբողջովին յստակ չէ»:

«Ճիշդ այնպէս՝ ինչպէս ամերիկացիք ճշգրտօրէն չեն հասկնար, թէ ուստի որո՞ւմ են: Ըստ ինձ, թէ անոնք թշնամիներ չեն, սակայն վստահաբար անոնք լաւ գաղտնակիցներ չեն», յայտնած է ան:

Իվանով «Մոսքովսքի Քոմսոմոլցե» օրաթերթին համացանցի կայքին վրայ Երեքշաբթի օր գետեղած հարցազրոյցին մէջ իր արտայայտութիւնները մեղմացուցած է, ըսելով, որ Մոսկուա այսօր Ուա-

շինկթընը «Իրրեւ գինուորական թշնամի չի տեսներ, այլ տնտեսական մարդին մէջ գործակից մը»:

Ան միւս կողմէ քննադատած է ամերիկեան վարչակարգին գորակցութիւնը՝ Չեչենիոյ ըմբոստներուն:

«Մինչեւ այն ատեն, որ անոնք չեչէն գինեալները ազատութեան ի խնդիր պայքարողներ կրկնատես, մեզի համար դժուար պիտի ըլլայ հասարակ մօտեցում մը գտնել՝ ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ», յայտնած է ան:

ՄՈՍԿՈՒԱ

ԼԵՊԵՏԵՒԻ ԱՐԳԵԼԱՓՎԱԿՈՒՄԸ ԵՐԿԱՐԱԶԳՈՒԹՅԱՒ

Մոսկուայի մէկ ատենը երէկ մինչեւ Դեկտեմբեր 30 երկարաձգած է ուսական «Յուլոս» ընկերութեան գլխաւոր բաժնետէրերէն՝ Փլաթոն Լեպետեւի արգելափակումը:

Լեպետեւ Թուրքիոյ Զին ձեռքարկուած է՝ ապօրինի կերպով մեծ գումարներ իւրացուցած ըլլալու յանցանքով: Ան առաջին գոհն էր Ռուսիոյ քարուղի մեծագոյն ընկերութեան «Յուլոս»-ի շուրջ բացուած քննութիւններուն, որոնք անցնող շաբաթավերջին գազաթնակէտի հասած էին ընկերութեան գործադիր տնօրէն Միխայիլ Սոտորեցովսքիի ձեռքարկութեամբ:

Դատարանային նախնական մէկ հրահանգին համաձայն, Լեպետեւ մինչեւ Հոկտեմբեր 30 բանտարկուած պէտք է մնար:

Սոտորեցովսքիի դէմ կան 7 ամբաստանութիւններ: Ան նաեւ կրնայ մինչեւ Դեկտեմբեր 30 արգելափակուած մնալ:

Երկու անձնաւորութիւնները միասնաբար ամբաստանուած են ապօրինի միջոցներով աւելի քան մէկ միլիարտ տոլար շահած ըլլալու յանցանքով:

Սոտորեցովսքի կը հերքէ ամբաստանութիւնները, ըսելով, թէ Կրեմլինի կարգ մը հատուածներու կողմէ քաղաքական արշաւի մը գոհն է ինք:

«ՆԵՐՔԻՆ ԸՆԴՅ»

Մինչ այդ, Իտալիոյ արտաքին գործոց նախարար Ֆրանչո Ֆրանչիսկի երէկ յայտնած է, որ Սոտորեցովսքիի ձեռքարկութեան հարցը «բացարձակապէս ներքին հարց է», որ չէ արժարժուած Ե. Միութեան Մոսկուա այցելող պատուիրակութեան կողմէ:

Պատուիրակութիւնը տեսակցութիւն մը ունեցած է արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի հետ:

Ե. Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կոնստանտին Կոզմինը քաղաքական գոյնացում մը կատարած է, ըսելով. «Ռուսիոյ մէջ, օտար ուղղակի ներդրումներ կրնան կարելի ըլլալ միայն կայունութեան եւ ապահովութեան կացութեան մը ներքեւ»:

Պատուիրակութիւնը կը պատրաստէ Ռուսիա-Ե. Միութիւնը վեհաժողովը, որ տեղի պիտի ունենայ գալ շաբաթ:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՀՐԴԵՂՆԵՐԸ ԿԸ ԾԱԽԱԼԻՆ

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, 28 (Ա.Յ.Փ.)- Հազարաւոր հրշեջներ երեքշաբթի օր հարաւային Քալիֆորնիոյ տարածքին հսկայ հրդեհներու դէմ պայքարած են, մինչ անոնք մայրուղիներէ «ցատկած են» եւ սպառնալիք դարձած՝ ստանալ հազարաւոր տուներու, առնուազն 17 գոհ խելէ ետք:

11 հսկայ հրդեհներ, որոնք կը յառաջանային անպատշաճ սաստիկ հովերու կողմէ, շուրջ 200 հազար հեքթար հող փնտրուցած են՝ Միքսիքական սահմանէ մինչեւ հիւսիսային Լոս Անճելըս:

Նախագահ Ճորճ Պուշմարընակ այդ շրջանը արդէ տալի գօտի հռչակած է:

ՄԱՍԼՈՅ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՑԱՆԿԻՆ ՄԷՋ ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ԳՐԱԻՔ 115ՐԴ ՏԵՂԸ

Փարիզ հաստատուած «Լրագրողներ Առանց Սահմանի» կազմակերպութեան կողմէ հրատարակուած նորագոյն տեղեկագիրին մէջ, Թուրքիա մամուլը պատուիրակին շնորհող երկիրներու ցանկին մէջ 115րդ դիրքը գրուած է 166 երկիրներու մէջ: Հայաստանն նոյն ցանկին մէջ կը գրուէ 90րդ դիրքը:

Եւրոմիութեան անդամ երկիրներն են, որ գրուած են առաջին տասը դիրքերը, մինչ Յունաստան ու Ամերիկա 31րդ տեղը կը գրուեն: Իրան կը գրուէ 160րդ, Իրաք՝ 135րդ, Սուրիա՝ 155րդ դիրքը, իսկ Հիւսիսային Քորեան ցանկին ամէնէն վերջինն է:

ԶԱԻԱԽԻ

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԳՍՏԻ ՄԱՐՄԻՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՒՍ Լուսանկարիչ՝ ՀՐԱՅՐ ԲԱԶԷ

Բացում՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003. Երեկոյեան ժամը 8:00-ին Լեւոն եւ Անժիա Յակոբեան Ազգային Գոլէժ

Ծանօթ: Յազարաւոր պիտի շարունակուի Երեկոյեան ժամը՝ 10:00 - 21:00 Զորեշաբթի ժամը՝ 10:00 - 14:00

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՒԻ Բանախօս՝ ԸՄԿ. Հայկազուն Ալվրցեան

Գեղարուեստական Յայտագիր

Երեկոյեան ժամը 8:00-ին, Յակոբ Տէր Միլեմեան թատերասրահ

ԱՇԿԱԿԵՐՍԱԿԱՆ ՀԱԻԱՒԻ Զորեշաբթի, 5 Նոյեմբեր 2003. առաւօտեան ժամը 11:00-ին Յակոբ Տէր Միլեմեան թատերասրահ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՒԻ ԵՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՒՍ ԱՅՆՃԱՐ Զորեշաբթի, 5 Նոյեմբեր 2003. Երեկոյեան ժամը 7:00-ին «Գ. Կիւլպէլկեան» սրահ

ՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՒՍ Երեկոյեան ժամը 7:00-ին Ազատամարտ Ակումբ, Էշքեփէ

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱԻԱՒԻ Ռոբոթ, 7 Նոյեմբեր 2003. կեսօրեան ժամը 12:00-ին, Կազմակերպութեամբ՝ Հայկազուն Համալսարանի «Heritage Club»-ին, Հայկազուն Համալսարանի սրահ

ՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՒՍ Ծառք, 8 եւ կիրակի 9 Նոյեմբեր 2003 ժամը 10:00-21:00 Ազգային - Հ.Մ.Ը.Մ. Մարգարէական կայանի Համալիր, ԱՅՔԻԽԱՍ

ԼԻԲԱՆԱՆԱՏԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱՌԼԱԷ

կը ներկայացնեն՝

ՄՈՒՄԷ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Նոյեմբեր 18ին

ԻՒՆԷՍՐՈ

ի սրահին մէջ

երեկոյեան 8:30-ին տոմսերը՝

Trading Places 01 611600, CD-Theque Ashrafieh - ABC, Համազգայինի գրախանութ, Նարեկացի գրախանութ եւ Ազգային Դպրոցներէ

BYBLOS BANK